## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

JUITUILANUT.

Կիրակի, 1964 Յուլիսի 12-ին Երուսադէմի Պատրիարը Ն. Ամենապատուութիւն Տ. Եդիչէ Արջեպս. Տէրտէրեան ժամանեց Վարչութեան կրկնակ Հրաւէրներուն։ Հայ Երուսաղէժի պատժութեան մէջ առաջին անդամ ըլլալով կ՚արձանադրուէր Պատրիարքի մր կողքի այսջան հեռաւոր երկրի մր տրուած այցելութիւնը։ Ն. Ամենա-



Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Սրբազան Հօր դիմաւորութեան եկած խուռն րազմութենէն մաս մը, Էսէյսայի օդակայանին մէջ։

Պուէնոս Այրէսի Էսէյսայի օդակայանը՝ այցելութիւն մը տալու Հարաւային Ամերիկայի Հայ դաղութներուն։ Ն. Ամենապատուութիւնը իր անդրանիկ այցելութիւնը կու տար Հարաւային Ամերիկայի Հայութեան՝ ընդառաջելով Հարաւային Ամերիկայի կաթողիկոսական Պատուիրակ Գերչ. Տ. Բաբդեն Եպս. Ապատեանի և Թեմի կեղրոնական

պատուութեան կ՝ընկերանար Երուսաղէմի Պատրիարջարանի Դիւանապետ Հոգչ. Տ. ՇաՀէ Վրդ. ԱՏԷմեան։

Պուէնոս Այրէսի Հայութիւնը, հազարներու հասնող թիւով մը խռնուած էր օդակայան՝ դիմաւորելու համար Սուրբ Երկրի Հայ Պատրիարջը։ Բազմութիւնը կը գլխաւորէին Գերչ. Կաթողիկոսական Պատուիրակը, կեղբոնական Վարչութեան անդամհերը, եկնդեցական դասը, ինչպես նաև օտար ջրիստոնեայ Համայնջներու ներկայացուցիչները։ Բուսն ծափահարութերններու
և խանպավառ մ թնություն մեջ օդանաւէն
իչնել և աւանդական այն ու հացր օրհնել 
ետր, Պատրիարը Արրավանը ուղղուեցաւ օդակայանի հիւրասենեակ, ուր իր առաջին
տպաւորութիւնները յայանեց տեղական
թերթերու թղթակիցներուն և ռատիոկայանի ու հեռատեսիլի ներկայացուցիչներուն։ Աննկարագրելի ողևորութեան մէջ
կայժունցու, որ դանդաղուիչն կարեց օդակայանկն բաղաք տանող համրան, մինչեւ

ունրակը բարի դալուստ մաղթեց և Ն. Ամեծապատությեսն լանձնեց Ա. Էջմիածներ Հասած Հետեւնալ Հեռադիրը.—

William which phia . 2

Պատրիարք Եղիջէ Արքեսա - Տէրտերհան.

Միրով կ'ողջունենք Ձեր ժամանումը Հարաւային Ամերիկա։ Հանեցէք բաշխել մեր հաւատացեալ ժողովուրդին նաեւ Մեր օրհնութիւնը Սուրբ Էջմիածնէն։ Ձեզ լիակատար յաջողութիւն։

Արժեն գրեր հրանական արդերու

Պատրիարը Արբազանը, յայտնապես բո-



Կեդրոնական Վարչական խորհուրդի անդամներ և Եկեղեցական դասը օդակայանին մէջ, օրհնելի աւանդական աղ ու հացով։

Առաջնորդանիստ Ս - Գրիդոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցին:

Եկեղեցիչն դուրս Թէ ներս խոնուած բազմութեան մէջէն եկեղեցականներու և դպիրներու Թափօրը «Հրաշափառ»ի երդե-ցողութեամբ Պատրիարջ Սրբազանը առաջ-նորդեց Ս. Սեղան, ուր կարճ արարողու- Թենէ մը ետջ Գերչ, Կաթողիկոսական Պատ-

դացուած չելաով, չնորհակալունիւն յայտնեց ներկաներուն՝ իրեն եղած իսանդավառ ընդունելունեան համար, առւաւ Ս. Երկրի Աստուածակոխ վայրերու օրհնունիւնը, Ս. Ցակորհանց դինուորեալ Միաբանունեան ողջոյնը, ինչպես նաեւ Յորդանանի իրենց հարադատ եղրայրներուն ու թոյրերուն սերը Սայա Ն. Ամենապատուունիւնը բարձրացու Առաջնորդարանի Դահլիճը, ընդունելու համար յանուն Արժաննինեան կառավարունեան բարի գալուստի այցելունեան եկած Կրօնական Գործերու Վոեմ Նակարարին փոխանորդը՝ Տբն Ռոպերնօ Ռամոն Պրավոն:

Օդակայանկն սկսնալ մինչնւ Առաջնորդարանին դարան, ինչպես նաև։ Առաջնորդարանին մեջ, Պատրիարբ Սրբադանին հետևւնցան Պուէնոս Այրեսի բոլոր ԹերԹերուն ԹղԹակիցները և ռատիսկայանի ու հեռատեսիլի ներկայացուցիչները, որոնք յատուկ հետաքրքրու Թեամր մը կ'ուղեին լսել Հայ Եկեղեցւոյ նուիրապետական ԱԹոռներէն մէԹղխակիցներու հետաքրքրունիւնը կր
կեղրոնանար գլխաւորաբար Ն Սրրունիւն
Պողոս Ձ Պապի Երուսադեմ այցելունիան
և բրիստոնեայ եկեղեցիներու փոխյարաբեըունեան վրայ։ Պուէնոս Այրէսի գլխաւոր
ներիները՝ «Լա Նասիոն», «Լա Բրենցա»,
«Գյարին», «Էլ Մունտ», Ն Ամենապատուունեան յայտարարունիւններէն ընդղծեցին բրիստոնեայ եկեղեցիներու մերձեցման, դործակցունեան և բաղձալի վերամիացման առնչունեամբ արտայայտած լաւատեսունիւնը։ Պատրիարք Սրրադանը ըստու
ի միջի այլոց «Ամրողջ իսնդիրը հասկացոդունեան հարց է կարեւորը այն է որ այժմ
բոլոր եկեղեցիները միունիւն կր ցանկան։



Ն․ Ամենապատուութիւն Պատրիարք Սրբազան Հայրը Արժանթինի հողին վրայ, Հարաւային Ամերիկայի Կաթողիկոսական Պատուիրակ Գերշ․ Տ․ Բարգէն Արքեպս․ Ապատեանի հետ։

կուն մեծ ներկայացուցչին խօսջերը։ Տեդական ԹերԹերը նախորդ օրերուն արդէն ծանուցած էին Պատրիարջ Սբրադանի մօտալուտ ժամանման լուրը, իսկ յաջորդ օր առանձին և երկար յօղուածներով Հրատարակեցին Նորին ԱմենապատուուԹեան լուռանկարը, կենսադրուԹիւնը և իր ժամանման առԹիւ ըրած յայտարարուԹիւնները։ Մենք հիմնական տարակարծութիւններ չունինք Կաթոլիկ եկեղեցիին հետ. ընդհակասակը, կր պահենք նոյն և մի հաւտաքը և ուրախութեամր կր տեսնենք թէ Վատիկանի 6. Ժողովը կուղէ դերանցել Կաթոլիկ եկեղեցիի պահպանողական դիրքերը ու ներքին մղումով մր կր ձգտի դէպի քրիստոնեայ եկեղեցիներու վերամիացումը»:

#### FULL SULLANDS BUCKERABE.

Գիչերը, Պատրիարը Սրրադանի այցելութեան առթիւ յատկապես կազմուած Ընդունելութեան Ցանձնախումրը և Հայ Առաբելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Կաղժակերպութիւնը մեծ Տաչկերոյթ մը սարբած էին «Հայ Կեղրոն»ի սրահին մէջ, ի
պատիւ Սրրադան հիւրին։ Օրհնարեր այս
այցելութեան առթիւ Պուէնոս Այրէսի Հայ
դաղութին դգացած ուրախութիւնը արտայայտող բարի դալուստի չերմ խօսջեր արտասանեցին Հ. Ա. Ե. Երիտ. Կազմակերպութեան Ատենապետ Տրթ. Անդրանիկ Ա-

ւոյ Հոգարարձութեան կեդրոնական վարչական խորհուրդի և Արժանթինի Հայ համայնքին կողմէ մեծ հաճոյքով կու գանք Ձեզի բարի գալուստ մաղթելու։ Կը յուսանք որ Ձեր հովուական այս բարերաստիկ և օրհնաբեր այցելութեամբ, մօտէն պիտի ծանօթանաք մեր հայրենասէր և ջերմեռանդգաղութին, որուն անդամները կը բավկանան գրեթէ թրքական եաթաղանէն մազապուրծ բեկորներէ, որոնք եկած են իրենց օճախները վերաշինելու Հարաւ Ամերիկայի այս բարի և հիւրասէր երկնակամարին տակ՝ միշտ կառչած մնալով իրենց եկեղեցական և ազգային սրբութիւններուն։



«Հայ Կեդրոն»ի Սրահին մէջ ի պատիւ Ն․ Ամենապատուութեան սարքուած ճաշկերոյթի պատուոյ սեղանը։

ջապահետն, Եկեղեցասէր Տիկնանց Կազմակերպութեան Փոխ-Ատենապետուհի Տկն. Հրանուշ Պալեան և Պատ. Կեդրոնական Վարչութեան կողմէ Տիար Գ. Սարաֆեան, որուն ուղերձր կու տանջ ստորեւ.—

Ամենապատիւ Սրբազան Հայր, Հայաստանեայց Առաքելական Եկեղեց\_ Հայ ժողովուրդը ուր որ ալ երթայ, միշտ սիրով և երկիւղածութեամբ կը յիշէ Ս Երուսաղէմը, Քրիստոնէական հաւատքի միջազգային կեդրոնը, ուր Լատին և Օրթոտոքս եկեղեցիներու հետ համահաւասար իրաւունքներու դարաւոր պաշտպանը հանդիսացած է Հայոց Պատրիարքութիւնը։

Արժանթինահայութիւնը մասնաւոր ե-

րախտագիտական պարտք ունի հանդէպ Ս.

Ցակորհանց Միարանութհան, որովհետեւ
անոր ծոցէն սնած և դաստիարակուած
պարտանանաչ եկեղեցականներ յանձն առած են հաւատքի լոյս և հոգեկան մխիթարութիւն բերելու մինչեւ այս հեռաւոր ափերը։ Անոնցմէ առաջինը եղած է Հայր Ցարութիւն Ծ. Վրդ. Մուշեանը, որ փայլ
տուած է մեր եկեղեցական արարողութիւններուն իր ձայնով և քարոզներով ու սատար
հանդիսացած՝ մեր դպրոցներու Հայեցի
դաստիարակութեան։

Երկրորդը՝ Սիոն Արքեպս Մանուկհանը, որպէս Կաթողիկոսական Պատուիրակ՝ գաղութիս համերաշխ գործակցութիւնը ամրացուցած է։ Հիմա, Նախախնամութեան բարեհան կարգադրութեամբ, ունինք մեր արժանաւոր հոգեւոր հովիւը, յանձինս Բարգէն Եպս Ապատեանի, իր կոչումին գիտակից անբասիր եկեղեցական պետին, որ մղիչ ուժը կը հանդիսանայ մեր եկեղեցական և կրթական գործունէութեանց։

Գոհունակութեամբ կ'ուզենք յիշել որ մեր գաղութն ալ մասամբ իր պարտականութիւնը կատարած է հանդէպ Հայ Երուսաղէմի, երբ անոր նուիրակները երկու
տարբեր առիթներով այցելեցին մեզի մասնաւոր առաքելութեամբ. վստահ ենք որ
եթէ դարձեալ առիթը ներկայանայ մեր
ժողովուրդը սիրով պիտի գիտնայ հատուցանել իր պարտքը, որովհետեւ ան խորապես գիտակից է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եկեղեցանուէր և ազգօգուտ
գործունէութեան Սփիւռքի մէջ:

Գեղեցիկ զուգադիպութեամր, այսօր կր տօնենք մեր Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան 11րդ. տարեդարձը. Կեդրոնական Վարչութեանս կողմէ մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտենեք, որպէսզի լաւագոյնս յառաջ տանին իրենց առաջադրութիւնները:

Սիրելի անակնկալ մը եղաւ անշուշտ մեր բոլորին համար՝ իբրեւ պատւոյ հիւր ներկայութիւնը մեր մէջ աշխարհի շախմատի ախոյեան Տիգրան Պետրոսեանի, մեր հարազատ եղբօր, որ սիրով ընդառաջեց մեր հրաւէրին՝ մեզի սեղանակից ըլլալու հայկական այս ջերմ յարկին տակ և մասնակցելու մեր երբեակ ուրախութիւններուն։ Մենք իրմով սեղանակից եղանք այս գիշեր մեր հայրենիքի բոլոր եղբայրներուն և քոյրերուն - այս ազնիւ վերաբերմունքին համար երախտապարտ ենք իրեն և սրտանց կը ցանկանք լաւագոյն յաջողութիւններ։

Ապա, Հարաշային Ամերիկայի Կաթ. Պատուիրակ Գերչ. Տ. Բարդէն Եպս. Ապատեսնի հրաշէրին պատասխանելով, խօսջ առաւ Ն. Ամենապատուութիւնը և ըսաւ.—

Գերշ - Կաթողիկոսական Պատուիրակ Հարաւային Ամերիկայի, Հոգեշնորհ եղբայրներ Եւ սիրելի ու պատուական հարազատներ.

Եթէ ըսեմ թէ այս իրիկուն խորապէս յուզուած եմ, ըսած պիտի չըլլամ ձեւական այն խօսքերէն մէկը, զոր առհասարակ նման առիթներով կ՚ըսեն։

Յուզուեցայ նախ ձեր բոլորի այս պատուական ներկայութենէն. յուզուեցայ մանաւանդ այն խօսքերէն՝ զորս երիտասարդութեան, վարչութեան, կանանց ներկայացուցիչները և մանաւանդ ձեր և մեր սիրելի Գերչ. Բարգէն Սրբազանը ըրին այս առիթով:

Նշանաւոր քարոզիչ մը, ակնարկելով Աւետարանի մէջ յիշատակուած կանայի հարսանիքին, ըսած է շատ յանդուգն կերպով
թէ այդ օրը ջուրը գինիի չփոխուեցաւ, այլ
մարդիկ, այդ սեղանին և մեր Տիրոջ շուրջ,
իր աշակերտներու խումբին հետ միասին,
այնքան ուրախ էին, այնքան իրենց մտածումները իրարու խառնուած էին, այնքան
իրենց զգացումները մէկ էին, որ ջուրը իրրեւ գինի խմեցին։ Եւ իրապէս այսօր, այս
սեղանին վրայ մեզի համար գինին՝ որ իրրեւ խորհրդանիշ կը գործածուի, ոչինչ
կրնայ աւելցնել մեր այն խանդավառութեան, որ մեզմէ մեզի կու գայ, բոլորէս
բխած ըլլալուն համար։

Եթէ ուզեմ ոչ թէ իրրեւ պատգամ, այլ պարզապես իրրեւ պատգամարեր պատգամ մը տալ նախ մեր երիտասարդութեան՝ որուն ակնարկուեցաւ, և յետոյ րոլորիդ, պիտի ըսեմ թէ մեծագոյն պատգամը ժողովուրդի մը կեանքին մէջ երիտասարդութիւնն է։ Այսինքն խարոխաւոր այն ուժը, որ ժողովուրդի մը երկաթեայ և պողպատեայ ողնայարը կը կազմէ։ Այն՝ ինչ որ ազգի մը ներկան է, գերագոյն ըղձանքը ներկային մէջ և ժողովուրդին վաղուան երազը։ Ժողովուրդներ մեծ են, առոյգ ու կայտառ՝ երբ իրենց երիտասարդ սերունդը գիտակից է և ուժով։

Այս պահուս միտքս կու գայ Պօղոս առաքեալի խօսքը՝ իր Տիմոթէոս աշակերտին ուղղուած, թէ «Հաւատքս պահեցի»։

Տարիները Պօղոս առաքեալէն առած էին իր պայծառ մանկութիւնը, իր կրակէ երի-տասարդութիւնը։ Ան, իր կեանքին ընթացքին, Միջին Արեւելքէն սկսեալ մինչեւ Եւրոպայի հեռաւոր ծայրերը նուանած էր, ստեղծելով քրիստոնէական հզօր կայսրութիւնը։ Այդ բոլորը սակայն իրեն չէին խօսեր, իր ծերութեան, իրրեւ գերագոյն պարծանք, իրեն կը խօսէր այն՝ թէ ինք կրցած էր պահել իր հաւատքը։ Այսինքն փունջը այն ճշմարտութիւններուն, որոնք իրեն աւանդուած էին և որոնք կու գային քրիստոնեայ անցեալէն։

Սիրելի հարագատներ, և մանաւանդ պատուական երիտասարդներ, մեր կեանքին մէջ կրնանք մեծահարուստներ ըլլալև պարծենալ թէ նիւթական կացութիւն մը ստեղծած ենք · ատիկա շատ լաւ բան է , յաջողութիւն մըն է կեանքին մէջ։ Ուրիշներ կրնան պարծենալ իրենց ճարպիկութեամբ, դիւանագիտութեամբ, թէ կրցած են մեծ խաղեր խաղալ և գործեր կարգադրել։ Տակաւին ուրիշներ կրնան պարծենալ իրենց տաղանդով, գիտութեամբ, թէ կրցած են կեանքին րերել ափ մը բարիք և կաթիլ մը լոյս։ Այս բոլորը կը պատկանէին Պօղոս առաքեալին, սակայն ինք այդ կարողութիւններով չէր պարծենար, այլ կը հպարտանար՝ յայտա– րարելով թէ կրցած էր պահել իր հաւատքը։

Սիրելի երիտասարդներ մեզի ալ մեր անցեալէն, մեր իմաստուն ժողովուրդի ժառանգութենէն, մեր եկեղեցւոյ անհուն և
սրբազան գանձարանէն աւանդներ տրուած
են, պարգեւներ, արժէքներ։ Եթէ կարենանք զանոնք պահել և փոխանցել մեր յաորդ սերունդներուն, ծառայած կ'րլլանք

մեր եկեղեցիին և մեր ժողովուրդին։

Մարդիկ կան որոնց հաւատքը և գաղա\_ փարները թռչունի բոյնին կը նմանին, ամէն եղանակին շինուհյու և քանդուհյու համար։ Չօրաւոր անհատներ պէտք են, որպեսգի կարենան իրենց մէջ անթեղել իրենց ցեղին, ժողովուրդին ու եկեղեցիին ամբողջական ժառանգութիւնը։ Այդ ժառանգութիւնը, որ մեզի եկած է՝ թանկ է մեզի համար։ Ժառանգութիւնը, որ մեր ժողովուրդին ու նախահայրերուն նուանումներովը եղած է, հրաշալի է մեզի համար ու կրնանք մեր արժէքներու կշիռով պարծենալ և ամենախոշոր ժողովուրդներու հետ միասին ըսել թէ մենք ալ բան մը բերած ենք մարդկութեան, թէ՝ մանաշանդ արեւելեան ժողովուրդներու կարգին, խոշոր բան բերած ենք քրիստոնէութեան ։

Շատեր անցած են քրիստոնէութեան գանձանակին առջեւէն։ Մէկը հոն դրած է իր իմաստասիրութիւնը, միւսը՝ իր բարոյական արժէքները, մէկը դրած է իր սուրը, ուրիշներ՝ իրենց արիւնը, և տակաւին շատ մը ուրիշ ազգեր՝ իրենց այսինչ կամ այնինչ արժէքները։

Հայ ժողովուրդն ալ անցած է քրիստոնէութեան և պատմութեան գանձանակին առջեւէն, և հոն դրած իր ամբողջ ունեցածը ու այդ ամբողջը տուած ըլլալուն համար է միայն որ կրցած է ապրիլ:

Մեր պատմութեան մէջ մենք ա՛յն ատեն ունեցած ենք ամէն ինչ, երբ տուած ենք ամէն ինչ, երբ տուած ենք ամէն ինչ։ Ա՛յն ատեն պատկանած ենք մենք մեզի՝ երբ չենք պատկանած մեզի։ Ա՛յն ատեն մենք դարձած ենք փրկիչ և զոհագործուող՝ երբ առանց սակարկելու տուած ենք ամէն բան։

Սիրելի երիտասարդներ. երգիչը պիտի գովուի իր ձայնին համար, բանաստեղծը՝ իր տաղանդին համար, երաժիշտը՝ իր նուագին համար, և սակայն երիտասարդութիւնը ուրիշ պաշտօն ունի։ Երիտասարդութիւնը պատգամատարն է, որ կ'առնէ օրուան պատգամը՝ զայն տալու համար յաջորդ սերունդին ու այսպէս շարունակարար։ Լաւիմացէք սակայն որ պատգամաբերը կը մեռնի իր պատգամին մէջ։

**Ինչպես** գիտեք պատմութենեն, հին օրե-

րուն, երբ մարդիկ մէկ տեղէն ուրիշ տեղ պրուգամներ կը ղրկէին, պատգամատարը շատ անգամ հագիւ հասած հոն՝ ուր պիտի տանէր իր պատգամը, կ՛իյնար ու կը մեռ– նէր։

ես անգութ մարդ մը չեմ բայց պիտի սիրէի որ մեր երիտասարդ եկեղեցականութիւնը և մեր երիտասարդ երիտասարդութիւնը, որոնք մեր այսօրուան սերունդը կը կազմեն և որոնց վրայ պարտականութիւն մը դրուած է, մեռնէին պատգամատարութեան իրենց պաշտօնին մէջ՝ անո՛վ ապրեցնելու համար Հայ ժողովուրդին արժանիք-ները և կատարելու իրենց դերը:

Այս առիթով իմ ամենախորին շնորհա-

լորիդ, որ երիտասարդաց կազմակերպութեան ելրդ. տարեդարձին առիթով քով քովի եկաք՝ ստեղծելով ա՛յն խանդավառութիւնը որ իմս ալ եղաւ օդակայանեն սկսեալ մինչեւ այս նաշասեղանը, իմ մտքիս մեջ անգամ մը եւս հաստատելով թէ Հայ ժողովուրդը ապրելու, յարատեւելու և ստեղծագործելու համար ծնած է:

Աստուած ձեզի հետ ըլլայ, իմ հարազատ եղբայրներ ու քոյրեր։

Երկարատեւ ծափողջոյններկ հաջ Պատրիարջ Սրբազանը առւաւ իր օրհնութիւնները և իր չջախումբով հրաժեշտ առաւ ներկաներկն:



Պատրիարք Սրբազան Հայրը, Արժանթինի Կրօնից Ն. Վ. Նախարարին հետ տեսակցութեան պահուն։ Ներկայ են նաեւ Գերշ․ Տ․ Բարգէն Արքեպս․ Ապատեան, Հոգշ․ Տ․ Շահէ Վրդ․ Անէմեան, Հոգշ․ Տ․ Ցարութիւն Ծ․ Վրդ․ Մուշեան, ինչպէս նաեւ Կեդր․ Խորհուրդի անդամներ Տիարք Ե․ Պայրամեան, Ա. Աջապահեան և Ժ․ Էքշեան։

կալութիւնը կը յայտնեմ նախ մեր սիրելի եղբօր՝ Բաբգէն Սբբազանին, և յետոյ իրեն աջակցող եկեղեցականներուն, կեդրոնական Վարչութեան և անոր օժանդակող թոլոր ենթայանձնախումբերուն ու ձեզի բո-

## CEANAGELALAPPACEEP.

Ֆաջորդ օր, Երկուչարթի, 13 Ցուլիս, Ն. Աժենապատասութիւնը Առաջնորդարանի Դահլիճին ժէջ ընդունեց օտար ջրիստոնեայ յարանուանութիւններու և ազգային զանադան Հաստատութիւններու ներկայացուցիչները, որոնք բարի դալուստի այցելութեան եկած էին:

Նոյն օրը Պատրիարը Սրրադանը ընդունեց Արժանթինի Արջեպիսկոպոս Կարտինալ
Գանիանոյի Փոխանորդ Մոնսենեօր Սէկուբան, որ յանուն իր Մեծաւորին բարի դալուստ մաղթեց Սրրազան այցելուին, յայտնեց Արժանթինի Կաթոլիկ Համայնջին ուբախութիւնն ու յարդանջները, և ի նչան
եղբայրական սիրոյ ու Համերաչխութեան՝
Հեկնելէ առաջ մտաւ Մայր Եկեղեցի և ադօթեց աչխարհի խաղաղութեան Համար:

#### USS 400218 CUNUCUCALPEUL.

Երևջչարնի, 14 Ցուլիս, Պատրիարջ Սրրադանը, իր Հետ ունենալով Գերչ. ԿաԹոդիկոսական Պատուիրակը, եկեղեցական դասն ու Կեղջոնական Վարչունեան անդամներ՝ փաստաբան Տիար Եփրատ Պայրամեանը, փաստաբան Տիար Անդրանիկ ԱՀապահեանը և Տիար Ժիրայր Էջչեանը, այցելունիւն մը տուաւ Կրօնից ՆախարարուԹեան:

Տեսակցութիւնը տեղի ունեցաւ փոխադարձ սիրոյ և յարդանքի մթնոլորտի մր

մէջ։ Մեկնումի պահուն, պատասխանելով
Վսեմ Նախարարին կողմէ Սրրադան հիւբին Արժանթին այցելութիւնը հաճելի և
հանդիստ դարձնելու առնչութեամբ յայտնուած պատրաստակամութեան, Ն Ամենապատուութիւնը ըստւ Թէ կը փափաքէր այցելել ու իր յարդանքը մատուցանել Արժանթինի Վսեմ Նախադահ Տջթ. Արթուրօ
Իլիային և ծաղկեփունջ մը դետեղել Արժանթինեան հերոս Սան Մարթինի Ցուչարձանին։

#### AUSPAZUAAPPANET.

Ն. Ամենապատուութիւն Պատրիարջ Սրրադանը, ընդառաջելով յայտնուած փափաջներու և խնդրանջներու, Ուրրաթ, 17 Յուլիսի երեկոյեան ժամը 5.30-ին Անդարդիտա կայանչն տուաւ հետեւեալ պատգամը.— **Ժողովուրդ Հայոց որ ի Պուէնոս Այրէս.** 

Այս քրիստոնհայ, օրհնհալ և ասպնջական հրկիրը մեր այցելութեան առիթով, սրտի պարտք կը զգանք անգամ մը հւս մեր խորունկ շնորհակալութիւնը յայտնելու նախ այս երկրի բարեխնամ կառավարութեան, անոր իմաստուն և պատուական Նախագահին, պետական ազգանուէր պաշտօնատարներուն, քաջակորով բանակին և Արժանթինի բոլոր զաւակներուն առհասարակ, որոնք կը ջանան և կը նիւթեն այս երկրին յառաջդիմութիւնն ու փառքը:

Մեր սրտագին շնորհակալութիւնը նոյնպես մեր սիրելի եղբօր՝ Հայրապետական
Պատուիրակ Գերշ Բարգեն Սրբազանին,
Հոգշ Վարդապետ և Քահանայ եղբայրներուն, կեդրոնական Վարչութեան խորհուրդի
ազնուահոգի անդամներուն և անոր ենթակայ մարմիններուն և օժանդակ յանձնախումբերուն և հաստատութեանց։ Շնորհակալութիւն նոյնպես տեղական, օտար և հայ
մամուլին, կրթական մշակներուն և հաստատութեանց, որոնք ըրին իրենց լաւագոյնը յարգելու համար Հայ Եկեղեցւոյ մեկ
պաշտօնեան մեր այս այցելութեանը առիթով:

Ուրախ եմ ըսել կարենալու համար որ այս օրհնեալ ու սիրելի երկրին մէջ մեր հարազատներուն չեն պակսիր տնտեսական գոհացուցիչ պայմաններ և կրօնական ու ազգային գիտակցութիւն, պարագայ մը որ մեծ ուրախութիւն կրնայ պատճառել ոեւէ հայու։ Ազգային յղացք և մեր հոգեկան ու իմացական արժէքներու գուրգուրանքը պէտք է աւելի քան երբեք տեւական մտասեւհռումը ըլլան մեզի համար գաղթաշխարհի մէջ, ատով ապրեցնել կարենալու համար մեր ցեղային այն ոգին՝ որ դարհրով մեր ժողովուրդը այրող տենդն է եղած։

Այդ յղացքը կը պայծառանայ մեր մէջ Հայ Եկեղեցիով, մեր ազգային գիտակցութեամբ և մեր անցեալի սրբութիւններու վերարծարծումով։ Ընտանիք, լեզու, դըպրոց, մշակոյթ, մամուլ մեր պահապան սուրբերն են անոնց պէտք ունինք՝ անսայթաք իր նպատակին կարենալ առաջնորդելու համար մեր անհատական, ազգային ու եկեղեցական կեանքը։

իր նախնհաց շառաւիղէն խոտորողը այլասհռած մըն է արատաւոր։ Իր հայրենի Աստուածն ու անցեալի նուիրականութիւնները ուրացող մարդը՝ իր նախնեաց գերեզմանները կոխկրտող սիրտ մըն է։ Մեզի, մեր այս օտարութիւններուն մէջ, անհրաժեշտ է մեր աստուածարհալ և երախտաշատ պապերու հրաշք ոգին և պաշտամունքը՝ անոնց մեզի թողած արժէքներուն, որպեսզի մեր հոգին չհագնի օտար շապիկ: Պէտք չէ որ մեր մէջ խորտակուի շղթան՝ որ մեր ներկան կր կապէ անցեալին։ Ներկան երբ հեռանայ ու խզուի անցեալէն, կը վերածուի խորտակուած հայելիի մը, որուն մէջ այլակերպած պիտի երեւի մեր հայրեpar nghi:

Դժնդակ օրեր ճամրայ են ելած դէպի մեր հաւաքական գոյութեան մերձաւոր ապառնին։ Մեր եկեղեցիին, մեր ցեղային ոգիին, մեր լեզուին և մեր սրբազան աւանդներուն միակտուր, աննահանջ և վայրագ պաշտամունքը դրօշակն է մեր բախտաւոր համախմրումին և գոյատեւման։

Պատուական հարազատներ.

Պահենք մեզի աւանդուած մեր անցեալի թանկագին ժառանգութիւնը. չտխրեցնենք ոգին մեր Մայրենի և Հայրենի մօր, որ-պէսզի կարենանք ճշմարիտ զաւակները ըլալ նախնեաց, անոնց հետ միասին փառաւորելու համար մեր հայրենի Աստուածը՝ որուն վայել է փառք յաւիտեանս, ամէն։

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՑ ԹԵՐԹԵՐՈՒ ԹՂԹԱԿԻՑՆԵՐՈՒ ՀԵՏ

Շարաթ, Ցուլիս 18, Ն. Ամենապատուութեան այցելեցին Պուէնոս Այրէսի Հայկական թերթերու՝ «Արժենիա»ի, «Սեւան»ի
և «Շարժում»ի թղթակիցները, և հարցագրրոյց մը ունեցան Պատրիարջ Սրբազան
Հօր հետ՝ Հայաստանեայց Եկեղեցին ու Հայ
ժողովուրդը հետաջրջրող հրատապ հարցերու չուրջ ընդհանրապէս, և Երուսաղէմի
մասին մասնաւորարար։ Ստորեւ վերոյիչևալ հարցափույցը կազմող գլխաւոր նիւթերէն մի ջանին.—

Հ. Ի՞նչ է արարներու տրամադրութ-իւնը առհասարակ հայերու հանդէպ։ Պ. Արաբները, Միջին Արեւելքի մէջ, մեր մեծ աղէտի օրերէն սկսեալ, իրենց ասպրնջականութեամբ և մեր ցաւին նկատմամբ ցոյց տուած իրենց մարդկային վերաբերմունքով, մեծագոյն սատարը հանդիսացան աղէտէն մազապուրծ մեր գաղթական ժողովուրդին:

իսկ մասնաւորելով մեր խօսքը Յորդանանի մասին, պէտք է ըսել որ շնորհիւ մեր իմաստուն և քաջակորով Հիւսէյն թագաւորին և Յորդանանի իրապէս ազնուասիրտ Արար ժողովուրդին, Հայոց Պատրիարքարանն ու ժողովուրդը կը վայելեն երկրին րոլոր բարիքները, առանց խտրութեան:

Հ. Ինչքա՞ն Հայեր կան Վանքին մէջ, և անոնց որքա՞նը ինքնապահ է:

Պ. Յորդանանի Հայութեան ընդհանուր թիւր կը հասնի ութը հազարի, գլխաւորարար հաստատուած Ամման մայրաքաղաքի և Երուսաղէմի մէջ։ Երուսաղէմի հայութեան կեսեն աւելին, մօտ հազար ութը հարիւր գաղթականներ, կը բնակին Վանքի պարիսպներէն ներս։ Պաղեստինի աղէտի օրերուն 1948-ին, վեց հազարի կր հասներ թիւր գաղթականներուն, որոնք ապաստան գտան վանքեն ներս և տարիներով վայելեցին Պատրիարքարանիս հոգածութիւնը և խնամքը։ Հետգիետէ անոնցմէ շատերը ինքնարաւ դառնալէ հաք դուրս հկան Վանքէն։ Մնացհայները, որոնք տակաւին կարիքը ունին վանքի և մեր ժողովուրդի հոգածութեան, կր շարունակեն վայելել Վանքին բարիքները։ Վերջերս բացումը կատարեցինք նորակառոյց Գաղթականաց Շենքին, Վանքի կալուածին վրայ կանգնած, ուր ապաստան գտան ութսունի մօտ ընտանիքներ, վանքարնակ գաղթականներէն։ Գաղթականաց Գրասենեակի և Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան իշխանական նուիրատուութեամր կառուցուած այս շէնքը կը յուսանք թէ առաջինն է շէնքերու այն շարքին, որ պիտի բերէ պատուաւոր լուծում մը վանքի մէջ ապաստան գտած գաղթականաց hunghu:

Հ. վանքին տպարանը տողաշարով օժտուա՞ծ է. եթէ այո, կարելի չէ՞ որոշ գործերու տպագրութեամբ հասոյթ ապահովել վանքին: Պ. Այր, Վանքին տպարանը վերջերս օժտուեցաւ ոչ միայն արդիական տողաշարով մը, այլ և նոր մամուլով մը, որոնք, կը յուսանք, պիտի իրականացնեն հրատարակութիւններու յատուկ ծրագիր մը, որ պիտի նպաստէ ոչ միայն մեր պիւտնէին, այլ նաեւ Հայ Մշակոյթին:

 Վանքը մնայուն ի՞նչ օժանդակութիւններ կը ստանայ արտասահմանէն:

Պ. վանքը մնայուն օժանդակութիւններ չունի արտասահմանեն, բացի Գալուստ կիւլ– պենկեան Հիմնարկութեան կրթական և բարեսիրական նպաստեն և Մելքոնեան կտա– կով եղած յատկացումեն:

Հ. Ցօգուտ Երուսաղէմի կարիքներուն, չէ՞ք խորհիր որոշ ձեռնարկներ ընել։

Պ. Վանքի կարիքները, իր գործունէութեան դաշտին պես, բազմերես են։ Եթէ Վանքի կարիքները ըսելով պիտի հասկնանք Պատրիարքարանի, Միարանութեան և Ս․ Տեղեաց մատակարարման անհրաժեշտ ծախսերը, մեր Վանքը կրնանք այլես ինքնաբաւ համարել։ Սակայն մեր Վանքի պիւտնէին մեծ մասը կը յատկացուի կրթական և բարեսիրական մեր հաստատութիւննե\_ րուն, գլխաւորաբար Ընծայարանի, Թարգմանչաց Վարժարանի, Ամմանի Ազգային Վարժարանի, Գաղթականաց Հոգատար Գրասենեակի և մշակութային ձեռնարկներու։ Եւ պիւտնէի այս մասը դժուարաւ կը հայթայթուի, երբ մանաւանդ նկատի ունենանք մեր կրթական գործը աւելի զարգացնելու և հիմնաւորելու փափաքը։ Մեր ձեռքերը կապուած են տակաւին պիւտնէի անրաւարարութեամբ, յատկապէս Ժառանգաւորացի և Ընծայարանի պարագային, ուր կ'ուզենք աւելի մեծ թիւով և խոր զարգացումով եկեղեցականներ պատրաստել:

Ընթացիկ պիւտնէի մտահոգութիւններէն վեր, երկու տարիներէ ի վեր կը տառապեցնէ մեզ Ս․ Ցարութեան Տանարի նորոգութեամբ սկսուած ծախսերու շարքը։ Հայ, Յոյն և Լատին Պատրիարքարաններէն իւրաքանչիւրը պէտք է հոգայ մէկ միլիոն տոլար, որպէսզի երկրաշարժներէն և ժամանակէն բոլորովին խախտած մեծափարթամ կառուցուածքը վերանորոգուի և վերստանայ Բիւզանդական փառքը կայսե

րական հին կառուցուածքներուն։ Չհոգալ այս գումարը, պիտի նշանակէր մեր խաչակիր թագաւորներու, իշխաններու և ուխտաւոր սերունդներու զոհողութիւններով ապահովուած և մեր զինուորեալ Միարանութեան արիւնով պաշտպանուած փառքի այս ցոլքը, որ մեր իրաւունքներն են Ս. Տեղեաց մէջ, մեր ձեռքերովը մարել։

Հինգ հարիւր միլիոնէ աւելի կաթոլիկներու և երեք հարիւր միլիոնէ աւելի յունադաւաններու կողքին Հայ փոքրաթիւ ժողովուրդի վայելած համահաւասար դիրքը միջազգային սրբատեղիներու մէջ, մենք կը նկատենք ժառանգութիւն մր՝ որ մեր ազգային և հողային ժառանգութիւններու կորուստեն ետք աւելի գուրգուրանքով և նախանձախնդրութեամբ պէտք է պահել, իրթեւ վկայութիւն և հպարտութիւն առիթ մեր հեռաւոր անցեալէն և փառաւոր պատմութենէն:

#### UNIFF AUSUPUS.

Կիրակի, Յուլիս 19, Պուկնոս Այրկսի Ս. Գրիդոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ հաւատացեայներու խուռներամ բաղ-մութեան մը ներկայութեան, Պատրիարջ Սրբազանը նախաղահեց օրուան արարողու-թիւններուն։ Պատարադեց Հողչ. Տ. Շահէ Վրդ. Ահէմեան, իսկ օրուան ջարողը խօսեցաւ Նորին Ամենապատուութիւնը, ընաբան ունենալով «Ձի դրեալ է թէ ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»։ Ստորեւ՝ Պատրիարջ Սրբա-դան Հօր ջարողը.—

իմ խօսքս ձեզի ըսելէ առաջ, սրտի պարտք կը զգամ նախ ձեզի բերելու սուրբ տեղեաց մեր Տիրոջ կոխած վայրերու օրհնութիւնը։ Օրենութիւն Ս. Ցարութեան Տաճարէն, մեր Տիրոջ Գերեզմանէն, Գողգոթայէն, Բեթղեհէմէն և առ հասարակ այն բոլոր վայրերէն, ուր մինչեւ այսօր կրթրթոայ մեր Տիրոջ ձայնը և որուն հողէն տակաւին կը բուրէ անոր արցունքին և արիւնին անուշ հոտը։

Ձեզի կը բերեմ նաեւ օրհնութիւնը Սրբոց Յակոբեանց Հաստատութենէն, կրօնական և ազգային այն մեծ ժառանգութենէն, որ սպիտակ աղաւնիի պէս թառած Սիոնի բարձունքին՝ իբրեւ որբավայր և ուխտավայր, դարերով իր յոյսին քաղցրութիւնը և հաւատքին լոյսը բաշխած է քրիստոնեայ Հայ սերունդներուն։ Ձեզի կը բերեն նաեւ ողջոյնը Երուսաղէմի զինուորեալ Միաբանութեան, որ դարերով, ինչպես անցեալի մէջ, այնպես ալ այսօր, գիշեր և ցերեկ կը հսկէ և կը պահպանէ ազգային այդ ժառանգութիւնը Երուսաղէմի յաւիտենական քաղաքին մէջ։

0

Յիսուս իր առաքելութեան սկզբնաւորութեան, իր գործի նախօրեակին, դէմ առ դէմ եկաւ աշխարհի չարիքին, սատանային հետ, որ փորձելու համար մեր Տէրը՝ կ'ուգէր որ ան քարերը հացերու վերածէր, յագեցնելու համար իր քաղցը:

Հացին, նիւթին կարիքը մեծ է մարդուն համար անտարակոյս, նիւթական այս աշխարհին մէջ։ Հացը ուրիշ բան չէ բայց դրամը, գործը, հաճոյքը, ապահովութիւնը մարդուն։ Հացին կարիքը կը սրէ մեր միտքն ու կարողութիւնները և կը մղէ մեզ գործի, շատցնելու կեանքին բարիքները։ Նիւթական ունեցողը իր հետը ունի աշխարհի ուժը դժրախտարար։ Վերածէ քարերը հացի և մարդոց բազմութիւններ պիտի վազեն ետեւէդ և հնազանդին քեզի։

Միւս կողմէ սակայն, նիւթին պաշտամունքը կրնայ մղել որդին սպաննելու իր հայրը, կինը՝ դաւաճանելու իր ամուսնին, ծառան՝ սպաննելու իր տէրը, աշակերտը՝ մատնելու իր վարդապետը երեսուն արծաթի։ Կեանքի չարիքներուն մեծ մասը կը թխի նիւթապաշտութենէն։ Նիւթով կր գնուին և կը վաճառուին բոլոր սրբութիւնները։ Ահա ճշմարտազանցութիւնը կեանքին, որ երկնտրանքի առջեւ դրած է բոլոր ժամանակներու մարդը։

Անապատին մեջ նոյն երկնտրանքին առջեւն է մեր Տէրը: Հոգին և նիւթը, բարին և
չարը կեցած են դէմ առ դէմ, իրրեւ հակադիր եզրեր իրարու։ Պահը մեծ է ու ճակատագրական, որովհետեւ այդ ընտրութենէն
կախուած է ոչ միայն Յիսուսի այլ աշխարհի դողդղացող ճակատագիրը, մարդուն

րարոյական և հոգհկան ուժերու յաղթանակը: Եւ սակայն անապատի խորերէն կը բարձրանայ յանկարծ Յիսուսի ձայնը,վնիտ ու վճռական, թէ «Ետիս կորիր սատանայ», որովհետեւ մարդը միայն հացով չէ որ կ՛ապրի, այլ աստուածային ճշմարտու– թիւններով, որոնք վերէն կու գան, կ՚անց– նին մեր հոգիէն և կը վերածեն մեր նիւթա– կանը լոյսի և գեղեցկութեան։

Չարիքը դիմաւորելու երկու կերպ կայառաջինը զայն ջնջել ջանալու կերպն է, զոր կարելի է բացասական կոչել, որովհետեւ ամէն յարձակում կը գրգռէ չարը և ընդդիմութեան կը հրաւիրէ զայն, երկարաձգելով այսպես չարիքներու անվերջ շղթաներկրորդ կերպը առաքինութիւններով զօրացնելն է ինքզինքը, փակելով դռները չարիքին դէմ- ասիկա դրական կերպն է չարի յաղթահարման: Յիսուս կրցաւ յաղթել չարին որովհետեւ լեցուած էր աստուածային հոգիով և սիրով, ինչպէս նաեւ մարդերը ազատագրելու առաքելութեամբ։

Մարդ իր կազմութեամբ qbpmqnjfi հրաշքն է ստեղծագործութեան, որովհետեւ իր մեջ մեկտեղուած են նիւթը և հոգին։ Մարդը իր մէջ ունի բարձրագոյնը՝ Աստուծոյ պատկերը, և ստորնագոյնը՝ նիւթը։ Ան կարօտը ունի Աստուծոյ, ինչպէս նաեւ կարօտը՝ աշխարհիս։ Ասով կը սկսի անգութ պայքարը հոգիին և նիւթին միջեւ, կազմելով ողբերգութիւնը մարդուն։ Բարձրագոյն նպատակը այս պայքարին ուրիշ բան չէ՝ րայց եթէ միութիւն մր Աստուծոյ հետ, վասնգի առանց պայքարի չկայ յաղթանակ և հաշտութիւն։ Յիսուս իրրեւ կատարեալ տիպարը մարդուն, անապատին խորը, Գեթսեմանիի պարտէզին մէջ և ապա խաչին վրայ տարաւ այս պայքարը, վերածելով Յիսուս-մարդը անհուն զայրոյթի, անհուն ներդաշնակութեան և յաղթող հերոսի։

Մարդկային բովանդակ պատմութիւնը ուրիշ բան չէ բայց ահաւոր պայքարը հոգիին և նիւթին, չարին և բարիին, և պատմութիւնը չէ կրցած տակաւին լուծել այս կնճիռը։ Ի զուր իմաստասէրներ, ընկերարաններ և բարոյագէտներ ծրագիրներ կ'առաջարկեն, երազներ կը հիւսեն, կեանքի այս տագնապը ամոքելու համար։ Անոնք

բոլորը կը նմանին խարոյկին վրայ ողջակիզուող զոհերուն քով կեցող նուագածուններու, որոնք իրենց խժալուր նուագով կը փորձեն խափանել զոհերուն աղիողորմ ճիաչերը։

Այն ժողովուրդները, որոնք քարերը հացի վերածելու աշխատանքը տարած են, ստեղծելով միայն նիւթականի և վայելքի թագաւորութիւնը, իրենց ակռաներով փորած են իրենց գերեզմանները։ Իսկ անոնք որ գիտցած են ի հարկին զոհել նիւթը ի շնորհուկս հոգեկանին, և հաւատացած են թէ հոգին առաւել է քան զմարմին, կրցած են ապրիլ։ Ցաւիտենական է ճշմարտութիւնը. ով որ նիւթը կը փրկէ, կը զոհէ հոգին և փոխադարձարար։ Բարոյապէս արթուն և զօրեղ են այն ժողովուրդները, որոնք գիտեն վեր դասել հոգեկանը, զոհելով նիւթը ի խնդիր գաղափարին։

Հին աշխարհի և քրիստոնէութեան տարրերութիւնը այս իրողութեան մէջ է։ Հին
աշխարհը կը հաւատար առաւելաբար նիւթին, ուժին, անոնց խորհրդանիշ եղող
հռովմէական արծիւին։ Քրիստոնէութեան
խորհրդանիշն է խաչը, որ ուրիշ բան չէ
հթէ ոչ զոհողութիւն, նուիրում, յանուն
մեծ և սուրր իտէալներու կամովին առնուած
տառապանք։ Մարդուն հոգին չ'երջանկանար և չ'անիր առնելով, այլ՝ տալով։ Ցափըշտակութեամբ կը մեծարուի մեր առնող
եսը, իսկ զոհողութեամբ՝ մեր տուող եսը։

Մեր պապերը գիտցած են այս ճշմարտութիւնը և ընտրած հոգին՝ զոհելով նիւթը։ Մեր կեանքը գինն է այդ ընտրութեան։ Անոնք չեն մեռած՝ մեռած ըլլալու սիրոյն։ Հայր կը տարբերի ուրիշ ժողովուրդներէն ոչ միայն իր ինքնութեամբ, այլ նաեւ զայն իրագործելու խորհուրդով։ Մենք ունեցած ենք կատարելութեան մեր մտատիպարը, ունեցած ենք մեզի յատուկ ոգի, և ուզած ենք ձեւ ու կեցուածք տալ անոր, ինքզինքնիս ըլլալու համար։

Երանի այն ժողովուրդներուն, որոնք ինքնագիտակցութեան իրենց ճամրուն վրայ զոհեր տուած են և վէրքեր ունեցած՝ ի խնդիր ոգեղէն արժէքներու պահպանու– թեան: Երանի անոնց մանաւանդ, որոնք իրենց այս վէրքերը համրուրել գիտցած են և անոնցմէ երգեր յօրինելով՝ երգած իրենց անցեալ սխրագործութիւնները:

Շատ են օրինակները մեր նախնիքներէն, որոնք զոհած են անհրաժեշտը՝ փրկելու համար ոգին։ Ձեզմէ շատերուն ծանօթ է պարագան Հայ վաճառականին, որ իր հայրենի քաղաքէն Հայէպ կ'երթար ընտանիքին համար պարէն հայթայթելու։ Երբ Հայէպի շուկան կը հասնի, կը տեսնէ որ թուրք մը Հայկական ձեռագիր աւետարան մը կը ծախէ։ Վաճառականը, ի տես այս վաճառքին, կը մոռնայ իր զաւակներուն համար պարէն գնելու պարագան, և իր ունեցած երեք ոսկիով կը գնէ ձեռագիրը։

Մարգարէական ոգի ունենալու պէտք չկայ ըսելու թէ յիսուն տարի վերջ գուցէ ըլլան Հայեր գաղութներու մէջ, բայց ոչ Հայութիւն։ Ովկէանոսի մէջ նաւը ընկըդ-մելէ վերջ առագաստի ծուէններ և տախտակի ու պարանի կտորներ տակաւին կրնան երկար ատեն ծփալ ջուրերուն վրայ, բայց այդ չի նշանակեր թէ նաւը չէ ընկղմած:

Մեր գոյութեան նաւը արտասահմանի մէջ իր նաւահանգիստին առաջնորդելու համար փարոսներու պէտք կայ։ Այդ լոյսը Հայ Եկեղեցին է, մեր լեզուն է, մեր աւանդութիւնն է, մեր մշակոյթն է, մեր սրբութիւններն են, մեր Հայրենիքն է։ Առանցայս սուրբերուն մենք ի վիճակի չենք ինք-զինքնիս յանձանձելու։ Ժողովուրդները կանգուն կը մնան՝ երբ հաւատարիմ են իրենց անցեալին, իրենց սրբութիւններուն, իրենց կեանքը ապահովող և դիմագիծ շինող ազդակներուն։

Սերունդի շարունակութեան մէջ իրենց անմահութեան գաղափարը տեսնել անհատական չէ միայն, այլ նաեւ՝ հաւաքական և ազգային։ Ժողովուրդներ եւս կը ձգտին անմահութեան։

Աղօթենք ի սրտէ, որ մեր մէջ չաղօտանան հոգեկան արժէքները, որպէսզի անոնցմով կարենանք շարունակել մեր կեանքը, փառաւորելով զանոնք յանուն սուրբ երրորդութեանն, որ է օրհնեալ յաւիտեան, ամէն:

#### 2. U. P. WEALPEUT BUCHEPARP.

Սուրբ Պատարադէն ևաջ, Պատրիարջ Սրբազանը իր շջախումրով ճաշի հիւրը հղաւ Պուէնոս Այրէսի Հ.Մ. Ր. Միութեան, վերջինիս մարդաղաչաի հիւրասենեակին մէջ, ուր ընդունունցաւ անդամներու բուռն ծափահարութիւններով։ Ճաշկերոյթի միջոցին խոսք առին Հ. Մ. Ը. Մ.ի Վարչութեան Ատենապետ Տիար Ռ. Պետիկեան և Գերչ. Կաթողիկոսական Պատուիրակը։ Իր փակման խոսջին մէջ Ն. Ամենապատուութիւնը ներկաներուն թելադրեց շարունակել աղդապահղանում ի խնդիր տարուող աշխարակորները, առանց նկատի ունենալու խոչընդոտներն ու դժուտրութիւնները։

#### JUSTUALIT CAMPPULL.

Յուլիս 21, Երևջչարքի, կէսօրէ հաջ, Երուսադեմեն դալով օդի ճամբով Պուէնոս Այրես ժամանեց Երուսադեմի Հայ Պատթիաբջունեան Նուիրակ Հողջ. Տ. Յակոր Վարդապետ Վարդանեան։ Դիմաւորունեան տամար օդակայան կր դանուէին Գերջ. Կաթողիկոսական Պատուիրակի փոխանորդ Հողջ. Տ. Յարութիւն Ծ. Վրդ. Մուչեան և Յովսէփ ձէրէնեան։

Կեղբոնական Վարչութեան անդամ Պրն.

LUGTERANT UPSTUCEFUE UPSTUU.

Buche 22, 2nph proppet, 4. w. dudp



Ն. Ամենապատուութիւնը Պուէնոս Այրէսի Հ. Մ. Ը. Միութեան Վարչական կազմին հետ։

## UBSULANPHNUUUP.

Յուլիս 20-21, Երկուչարնի-Երևջչարթի, Պատրիարը Երրադան Հօր բարի դալուստի այցելունեան եկան Հայ թէ օտար կաղմակերպունիւններու վարչունիւնները, որոնց մէջ նաեւ Արար Մչակունային Միութեան ներկայացուցիչները: 10.30-ին Պատրիարը Սրբազանը ընդունեց Արժանքինի Ասորիներու Եպիսկոպոսը և Համայնջային վարչութիւնը, որոնջ Ն Ա- ժանքինի Ասորի Համայնջին բարի գայուստի ողջոյնն ու յարդանջները:

Նոյն օրը կկսօրկ հաջ ժամը 4-ին, Պատբիարը Սրրադանը այցելեց Արժան Թինի Արջեպիսկոպոս Կարաինալ Գածիանոյի, վերջինիս Առաջնորդարանին մէջ։

Պատրիարջ Սրրազան Հօր ընկերացան Կաթողիկոսական Պատուիրակ Գերչ. Տ. Բարդէն Եպս. Ապատեան, իր Փոխանորդը՝ Հուլ. Տ. Ցարութիւն Ծ. Վրդ. Մուչեան, Երուսաղէժի Ժառանդաւորաց Վարժարանի Տեսուչ Հուլ. Տ. Ցակոր Վրդ. Վարդան-հան, Պատրիարջարանի Դիւանապետ Հուլ. Տ. Շահէ Վրդ. ԱՏէժեան, Կեդրոնական Վարչութեան Փոխ-Ատենապետ Տիար Գէորդ Սարաֆեան, Ատենադպիր Տջթ. Եփրատ Պայրաժեան և անդաժ Տիար Սարդիս Քեթէն։

Բարի դալուստի սիրալիր ողջոյններէն ետբ, Ն. Գերապատուութիւն Կարտինալը ցունեան և սիրոյ մինոլորար առհասարակ:

Ն. ԳերապատուուԹիւնը յայտնեց ԹԷ Վատիկանի ժողովէն հաք, այս տարի, ծրադրած է այցելել Ս. Երկիր և իր ուիտը կատարել աստուածակոխ սրրավայրերուն Հէջ:

Այս տոնիւ, Պատրիարջ Սրրազանը Հրաւիրեց Կարտինալ Գանիանոն որ ըլլայ Հայոց Պատրիարջարանին հիւրը, Երուսադէմ իր այցելունեան ըննացջին։ Ձգացուած, Կարտինալը չնորհակալունիւն յայտնեց և ընդունեց հրաւէրը։

ԿԱՐՏԻՆԱԼ ԳԱՃԻԱՆՈՅԻ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆԸ.

Buche 23, Thungapph, 4. m. sung



Ն․ Գ․ Կարտինալ Գաճիանօ, երբ ջերմ զրոյց կ'ունենայ Պատրիարք Սրբազան Հօր և Գերշ․ Կաթողիկոսական Պատուիրակին հետ։

ներկայացուց Պատրիարջ Սրրազանին իր աշխատակիցները, Առաջնորդարանի բարձ– րաստիձան եկեղեցականներ։

Խոսակցութերւնը ընդդրկեց գլխաւորարար
Ն. Սրրութեւն Պօղոս Ձ. Պապին այցելութեւնը Երուսաղէմի Հայոց Պատրիարջարան
և ջրիստոնէական եկեղեցիներէն ներս
յայտնուող Հանդուրժողութեան, գործակ-

10.30-ին, Հայոց Առաջնորդարան այցելեց Ն. Գերապատուութիւն կարտինալ Գածիանօ, Արժանթինի Արջեպիսկոպոսը։ Արտաջին դոնէն ընդունուեցաւ Արսլանեան Ազգ. Վարժարանի աչակերտութեան կողմէ, որ Ն. Գերապատուութեան ներկայացուց ծաղկեփունք մը։

Pusifish duemphis, b. Abpungumnent

թիւնը ընդունունցաւ նկնդնցական դասուն և կեդրոնական Վարչութեան Ատենապետ Տիար Արժ էն Պերկաժալին, Փոխ-Ատենապետ Տիար Գէորդ Սարաֆեանն, Ատենադպիր Տրթ. Եփրատ Պայրաժեանն և Խորհրդական Տիար Յովսէփ Ճէրէնեանի կողմէ:

Ն. Գ. Կարտինալ Գահիանօ Պատրիարը Սրբադան Հօր ընժայեց արծաթեայ ափոկ որ Վատիկանի Ս. Պետրոս Եկեղեցւոյ ջան-դակով, Հանդուցեալ ՅովՀաննէս ԻԳ. Պապի և Կարտինալին նկարներով, յատկապէս պատրաստուած ի յիչատակ Վատիկանի Բ. Ժողովին:

Պատրիարը Սրրադանը փոխադարձարար, Ն. Գերապատուութեան ընծայեց Սրրադան Պապին շրջանակուած մեծադիր նկարը, առնուած Հայոց Պատրիարջարանին մէջ:

Երկու բարձրաստիճան եկեղեցականներու խոսակցութեան առարկայ եզան դրլխաւորաբար Վատիկանի Բ. Ժողովը և Երուսաղէմի Ս. Ցարութեան Տաճարի նորոդութիւնը:

Ժամուան մը չատ սիրալիր և մաերմիկ ահսակցութեան ընթացջին, երբ երկու եկեղեցականներու գուարթախոս ընտւորու-Philip umbydby suship of Phagagen of p. Պատրիարը Սրբադանը կրկնեց իր հրաւէրը, որ Ն. Գերապատուութիւնը ընդունի ըլլայ Հայոց Պատրիարջարանի հիւրը՝ Երուսաղէմ կատարելիք իր ուխտաւորունեան ընթացրին: Ն. Գ. Գահիանօ Արբեպիսկոպոս ժայիտով ընդունեց եղած հրաւէրը և աւելgneg. «Lumb bd mpqth bpneumqtd nefumb դացած իմ եկեղեցական եղբայբներէս՝ Ս. Տեղեաց մատակարարման մէջ Հայոց վայելած բացառիկ դիրքին և առաւելութիւններուն մասին : Ի զուր չէ որ Քահանայապետը րսած ըլլայ Ձեր Պատրիարջարանին մէջ. "Իսկապես տարբեր են Հայերը"»:

Տեսակցութենկն հար, Ն. Գերապատւութիւնը փափաբեցաւ այցելել նաեւ Ս.
Գրիդոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցին, ուր,
խորանին առջեւ ծնրադրած, Պատրիարջ
Սրրադանի կողջին, աղօթեց եկեղեցիներու
ժիութեան Համար։

4 tuophi, Ն. Ամենապատուու թիւնը ճա-

չեց Առաջնորդարանի սրահին մեջ, Հայ եկեղեցականներու դասին հետ։

Նոյն օրը, երեկոյեան ժամը 4-ին, Պատրիարք Սրբադան Հայրը այցելեց Ուղղափառ Ռուս Եկեղեցւոյ Առաջնորդ Նիկոդիմ Եպիսկոպոսին, և ապա՝ Ուղղափառ Արաբ Եկեղեցւոյ `ներկայացուցիչներուն, իրենց Առաջնորդարանին մէջ:

#### ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ՁԵՏԵՂՈՒՄ.

Յուլիս 24, Ուրրաթ, կ. ա. ժամը 11-ին, Պատրիար, Սրրադանը, իր հետ ունենալով Գերչ. Կաթոգիկոսական Պատուիրակը, ե-կեղեցականներու դասը և Կեդրոնական Վարչութեան անդանները, ծաղկեպսակ մը դետեղեց Արժանթինեան հերոս Սան Մար-թինի դերեղմանին վրայ, արտասանելով «հուոց» մը:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Վ. ՏՔԹ. ԱՐԹՈՒՐՕ ԻԼԻԱՑԻՆ.

Նոյն օրը երեկոյեան ժամը 7.30-ին, Պատրիարը Սրրադանը իր շրախումբով պաշտօնական այցելութիւն մր տուաւ Նա-իստդահական Պալատին և ընդունունցաւ Ն. Վ. Հանրապետութեան Նախադահին կողմէ:

Ն. Վահմու խետան կողջին էին Կրոնից Նախարար Տջթ. Խոսէ Նոկերոլ Արմենկոլ և իր որնականը՝ Տջթ. Ռոպերթո Պրավո:

Պատրիարգ Սրրադանը իր խոսքը ուղղե-Ind b. Lutidne file bulanquishe, pume. «Արժան թինի մեր դաղու թին այցելու թեանս առիթով, ինւթգինքս բարձրօրէն պատուուած կր դգամ արժանանալով Ձերդ Վսեմու Թեան այս ընդունելութեան։ Տպաւորութիւնը դոր ունիմ բրիստոննայ, գեղեցիկ և յառաջդի-Inchair Sudpact off bong win boloto, իմ լաւաղոյն յիչատակներէս մին պիտի ենայ։ Ձեն կրնար չհիանալ Ձեր ասպնվական երկրին վրայ, որուն լիառատ բարիթները կր վայելեն անխարը Ձեր բոլոր երջանիկ դաւակները։ Աստուծոյ Հովանին Թող անպակաս բլլայ այս երկրին և անոր ժողովուրդին վրայէն, և Տէրը Ձեզի ալ պարզեւէ ուժ և կարողությիւն՝ որպեսզի բոլորին ծանձի Ձեր իմաստուինեամբ և բարութեամբ առաջնորդեք այս երկիրը իր իղձերուն և իակալներուն իրադորժման։ Այս առիքը, Ձերդ Վսեմութեան կը ընթեմ նաև Ս. Տեղեաց և Քրիստոսի ներկայութենամբ օժուաժ Սրրավայրերուն օր-նութիւնը»:

Պատրիարը Սրբազանի խոսջերուն պատասխանելով, Ն. Վոեժությիւն Նախագահը րսաւ. «Ինժի հաժար ժեծ հահոյը է ընդունիլ Ձերդ Աժենապատուությեսն նման բարձբաստիհան եկեղեցական մը, որ կը բերէ ժեղի Ս. Երկրի օրհնությիւնը և կը դօրացնէ կապերը ժողովուրդներու միջեւ։ Վերջին շրջանին, առիթը ունեցայ Հայ կարեւոր անձնաւորությիւններ ընդունելու և տպաւորությիւններս հանելի եղան։ Սակայն Ձերդ արև կր րերեն իրենց ցեղին։ Ամէն Արժաննիացիի փափաբն է այցելել Ս. Երկիր և ներչնչուիլ Ս. Գրական յիչատակներէն. իմ ալ ցանկունիւնս է այդ. երանի կարենայի Ձեր այցելունիւնը փոխադարձել Երուսաղէմի մէջ...»:

Այս առքիւ, Ն. Ամենապատուութիւն Գատրիարը Սրրագանը Ն. Վոհմութիւն Նաիազա: Տջի . Արթուրս Իլիայի կուրծջը դարդարեց Սուրը Ցարութեան Տաճարի Առաջին Կարգի աղամանդակուռ չջանչանով, միաժամանակ Ն. Վոհմութեան յանձնելով դեղեցկօրէն դեղադարդուած և Արժանթինեան լեղուով դրուած պատուոյ դիր մը:

կես ժամ տեւող այցելութեան ընթացբին, խոսակցութիւնը չարունակունցաւ Հա-



Ն. Գ. Կարտինալ Գաճիանօ՝ Ն. Ամենապատուութեան, Եկեղեցական դասին և Կեդր. Վարչութեան անդամներուն հետ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր Եկեղեցիին մուտքին։

Աժենապատուունեան շնորհարեր այցելունիւնը եզաւ նայն ու պսակը բոլորին։ Ես Հայերը յաւ կր ճանչնաժ իրրեւ աշխատասէր և պարկելա թաղաջացիներ, որոնջ իըննց նպաստը կը բերեն երկրի կառուցման և յառաջդիմունեան։ Տոկուն, կամջի տէր և խելացի, անոնջ օրինակ են այլոց և պա-

ձելի և մահրմիկ արտայայտութիւններով, որոնցմէ հաջ Պատրիարջ Սրբազանը և իր Հետեւորդները Հրաժելա առին Ն. Վ. Նախաղահէն։

Գիչերը, Պատրիարը Սրբադանը Հիւրբ եղաւ Կեղրոնական ՎարչուԹեան Փոխ-Ատենապետ Տիար Գէորդ Սարաֆեանի, վերջինիս բնակարանին մէջ։ Հաճելի ընթրիջէ մր հաջ, Տէր և Տիկին Սարաֆեաններու Թոոները ինջնարուխ կերպով իրենց ինայողուվեան դանձանակի պարունակութիւնընուիրեցին Ս. Ցարութեան Տաճարի նորովութեան ֆոնտին:

#### U. WU.9 ԵԿԵՂԵՑԻՈՑ ՃԱՇԿԵՐՈՑԹ.

Bacha 25, Շարաթ, Պատրիարը Սրրաmuip spepunppneligue Suzhbengond se, կոր կազմակերպած էր Արծրունեան Ազգ. Lupdupuble Loquepupane Plante Shipung կազմակերպու թիւնը, «Հայ կեղբոն»ի սրաspin 159: 2pmchpnelind double nepulo Bunjapunal stumpud surmenster, b. U-«Անապատուու թիւնր խoupp ուղղեց ներկայ Lynn dusphpnik to strenty Pt Zwy Vinjep Հակատագրական պարտականութիւն մր կր կատարե Սփիւռքի մեջ: Որպես եզրակացութիւն, Պատրիարը Սրրադանը ըսաւ. «Ազդեր դրօչակ մր կ'ունենան և այդ դրօչակին վրայ դինանչաններ կր դնեն : ԵԹԷ պէտբ բլլայ որ մենը, արտասահմանի Հայերս, մեր գրօչակին վրայ գինանչան մր դնենք, այդ պետք է րյլայ կանթեղն ու դիրքը»:.

#### BULLIANS

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԵՐՇ. ՊԱՏՈՒԻՐԱԿԻ 25-ԱՄԵԱՑ ՔԱՀԱՆԱՑՈՒԹԵԱՆ

Յուլիս 26, Կիրակի, մեծ չուքով տօնուեցաւ Հարաւային Ամերիկայի Կաթոզիկոսական Պատուիրակ Գերչ. Տ. Բարգէն Եպո. Ապատեանի Քահանայութեան բսանհինդամեակը։

Առաւստեան, Պուէնոս Այրէսի Ս. Գրիդոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցիին մէջ Ս. Պատարագր մատոյց Յորելեար Սրրազանը։ Գուռւթենկն առաջ, Հոգլ. Տ. Շահէ Վրդ. Անկմեան Ս. Խորանկն կարդաց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վաղդկն Ա. Վեհափառ Կաթողիկոսի որրատառ Կոնդակը, որով Արջութեան պատիւ կը չնորհուկը Պատուիրակ Սրրազան Հօր։

Կոնդակի ընթերցումէն հաջ, Պատրիարջ Սրրադանը խոսհցաւ ներչնչուած ջարող մբ, որուն ընթացջին վեր առաւ Յորելհար Սրբ-

րաղանին եկեղեցանուէր և ազգանուէր դործունէունիւնը։

Ս. Պատարադի վերջաւորութեան, Ն. Աժենապատուութեան ծախադահութեամբ կատարուեցաւ հոգեհանդստեան պաշտոն՝ Ցոբելեար Սրբաղանի վախճանեալ ծնողջի հոդիներուն ի հանդիստ։

Արարողունեան աւտրտին, Յորելեար Սրրազանը եկեղեցիին ժէջ ընդունեց չնոր-Հաւորունիւնները Հաւատացեալ ժողովուրդին, իսկ Առաջնորդարանի Դահլիհին ժէջ՝ օտար եկեղեցական և պետական ներկայացուցիչներու ըարեժաղնունիւնները:

bublinghab dudy 9.30-pb, «2mj 4hnpringle upushin ity upnetique Suzhtenift Sp' h mambe Baptibup Uppungub Zop: ձայկերոյնի ընթացքին խոսք առին 9ph. 1. S. Webmfubuit, Apt. Updto Abplus-Sully, Lang. S. Burneffet T. Lpg. Une buil , blanky . Am journe Blank lang to Aph. Bufuto Guenne Stub, 2. 1. b. b. կազմակերպու նեան կողմ է՝ Օրդ. Մանուչակ I tupnybuis, Repnehnemil L. F. L. Uhne-What honds Apt. Welmbe bulyanumbur, Արսյանեան Վարժարանի Շրջանաւարտնեpart hands' Apt. Appare Variation, Afeubuft Latigh Zwine Blown handt' Apis. Եղուարդ Դերձակեան, Եկեղեցասեր Shyնանց կազմակերպութեան կողմէ՝ Տկն. Optipu Pupitur, «Cupturd» jupubu-Phopph handt' Apr. Atopy Vaczbeni, «Upstupus opuBbpHh hnast, Api. Unhpmm Թերդեան, «Սեւան» չաբաթաթերթի կողմէ՝ Պրև. Գրիդոր Կէ մենեան, Սարկաւադներու կողմե՝ Պրն. Վարդղես կեռոյեան:

Моսք առնելով, Պատրիարք Սրբադանը դրաշատեց Գերչ. Պատուիրակին Հանդեպ Պուէնոս Այրէսի Հայ դաղութին կողմէ ցոյց արուած սէրն ու յարդանքը, և Թելադրեց աւհլի խանդավառութեամբ խմբուիլ Գերչ. Տ. Բարդէն Արջեպիսկոպոսի չուրջ՝ անոր աղգանուէր ջանջերը լիակատար յաջողու– Թեամբ պսակելու Համար:

Հրաշիրուհլով փակման խօսբը ընելու, Ցորելեար Սրրազանը ըստւ.—

Մաշած և խեղճ բառ է շնորհակալութիւն բառը, յայտնելու համար իմ ամբողջական զգացումը ձեր խօսքերուն, մաղթանքներուն և ներկայութեան համար։

Յուզումնախառն ուրախութիւնը որ կը զգամ այսօր, կ'ուզեմ բաժնել ձեր բոլորին հետ։ Որովհետեւ ինչպես վիշտը, նոյնպես և երջանկութիւնը կարելի չէ ամբողջութեամբ կրել սրտին համար ծանր պիտի ըլլար ընել այդ։ Ու երջանկութիւնը, որ իմս է, չի գար այն իրողութենեն՝ որ կը ստանամ յարգանքի ցոյց մը այսօր, այլ քսանհինգ տարիներ առաջ ինծի Աստուծմէ տրուած շնորհին՝ որ կրցայ ծառայել ազգիս և եկեղեցիիս իմովսանն։

Եթէ նոյնիսկ յաջողութիւններ ունեցայ, գանոնք կր պարտիմ մեր ժողովուրդին, անոր գործակցութեան և հասկացողութեան։ Այլապէս առանձին ոեւէ անհատ, որքան ալ հանճարեղ և կարող՝ պիտի չարժէ բան մր։ Արքութեան շնորհումը մեր բոլորէն մեր բոլորին տրուած վարձատրութիւն մրն է։

Այսօրուան այս մասնաւոր հանգրուանին մէջէն հոգիս նահւ կը յիշէ անցհալի մէջ սիրելի այն դէմքերը, ծնողք և ուսուցիչ, որոնք իմ կազմութեանս մէջ բաժին ունեցան։ Կը զգամ թէ ինչ որ եմ, կը պարտիմ անոնց և հիմա յարգանքով և հրախտագիտութեամը կը խոնարհիմ անոնց յիշատակին առջեւ։

Ու այս բոլորին հետ կը մտածեմ նաեւ
այն ծանրութեան մասին, որ աստիճանի
բարձրացում մը անպայմանօրէն կը բերէ
իրեն հետ։ Պէտք է կարենամ արդարացնել
բոլոր ակնկալութիւնները։ Ու կը հաւատամ
որ Աստուած զօրավիգ պիտի ըլլայ ինծի, և
մեր գաղութի պատուական հայ ժողովուրդը պիտի համագործակցի նորէն նոյն
սիրով և հասկացողութեամբ, որպէսզի կաբենանք իրագործել հաւաքական մեր նպատակները։

Շնորհակալութիւն պատուին համար որ ընծայեցիք ինծի, զոր կը նկատեմ պատիւ՝ ընծայուած Հայաստանեայց Ս․ Եկեղեցիին, որուն համեստ մէկ պաշտօնեան եմ ես, և որուն փառքին ու պայծառութեան ծառան միայն։

Երախտագիտութիւն Երուսաղէմի Ամենապատիւ Պատրիարք Սրրազանին, որ իր ազնիւ խօսքով փայլեցուց այս օրը և խորապէս ուրախացուց սիրտս իր բարեկամի և ուսուցչի ներկայութեամը։

Յորելեար Սրրադանին ի պատիւ սարթուած ձաշկերոյիքը վերջ դատւ Պատրիարջ Սրրադան Հօր ՊաՀպանիչով և Տէրունական աղօխչով:

#### ԱՐՍԼԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՃԱՇԿԵՐՈՑԹ.

Յուլիս 27, Երկուչարթի, Պատրիարջ Սրրազանը հիւրը հղաւ Արսլանեան Ազգային Վարժարանի Տեսուչ Հոգչ. Տ. Ցարութիւն Ծ. Վրդ. Մուչեանի և Ուսուցչական Կազմին, որուն ընթացջին Ն. Ամենապատուութիւնը հետաջրջրունցաւ Հայ ուսուցիչները և Պուկնոս Այրէսի Հայկական Վարժարանները գրաղեցնող դանազան հարցերով:

Նոյն օրը, յետ միջօրէին, Ն. Ամենապատուունեան այցելեց Պոլսոյ Հայրենակցական Միունեան Վարչունիւնը։

#### 

Յուլիս 28, ԵրևջչարԹի, Պատրիարջ Սրբադանը Տաշի հիւրը եղաւ Մերկերեան -ԴանիԼլեան ընտանիջներուն, Պրն Ալևջոան Մերկերեանի տան մէջ:

Նոյն օրը, կէսօրէ հաջ, Ն. Աժենապատուութեան այցելեցին Պուէնոս Այրէսի Հայ Բողոջական համայնջի ներկայացուցիչները, իրենց Հոգեւոր Հովիւին գլխաւորութեամը։

Երեկոյեան, Պատրիարը Սրրազանը հիւըասիրուեցաւ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Պրն. Արժ էն Պերկամալիի կողժ է։ Այս առթիւ հրաւիրուած էին նաեւ չատ մը աղդայիններ։

#### WARZPAULBULUE JANAL.

Ցուլիս 29, Չորևջչարթի, Պատրիարջ Սրրադան Հօր այցելեցին Արժանթինեան Քրիստոնեայ Տեմոջրաթ Կուսակցութեան դեկավարները, և մտերմիկ խօսակցութեան մր ընթացջին լայնօրէն Հետաջրջրուեցան Երուսաղէմով, Սուրբ Ցարութեան Տաճարի նորողութեամբ, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական յարարերութիւններով:

45 սօրին , 6. Աժենապատուու Թիւնը հիւ-

րասիրունցաւ Գրն. Լևւոն Թէրդնանի ընտկարանին մէջ, ուր այս առ Թիւ հրաւիրուած էին նաևւ ծանօթ արդայիններ:

Unite opp, teptinghair dant p 8-pi, 4hqunbulgate Lapene Blow's Spart part, funde մր ծանօթ ազգայիններու ներկայութեան Uningtingaparth aparth sty quedupartame Mapspaulgulus dagad so Vacen Ցարու թեան Տաճարի նորողու թեան Հարաւային Ամերիկայի հանդանակութեան չուրց: Jaguiffit 4p նախագահեր Աժեն. U. 9wmphuppy, or love walkind whyther fich пор шисте врисиндов дил Яштрвирошրանի նիշ ժական կացու ժեան մասին : Հոգչ. 8. Շահէ Վրդ. Անկնեան մանրամասն բադատրու թիւններ տուաւ Ս. Ցարու թեան Տաճարին մէջ ցարդ կատարուած նորոդու-Whiliblymin zoupy, he stronty of unprogreթեան ծախանրու Հայոց րաժինը կր հասներ ath shiping majuph, april boto supper հաղարը յանձն առած էր հոգալ Գայուստ կիսյայէնկեսն Հիմնարկութիւնը: Հոգլ. Հայր Unipply weligney fot win waterefluide Theuhowship Watphywish sty hummpnemed Տանդանակութեան արդիւնքը եղած էր 430 Sшашр шарыр, le 184 2шршешурь Ustephկայի Հայունեան որպես բաժին նյանակend the embleh emand mulmb:

Վերոյիչեալ տեղեկութիւններու հիման վրայ և յետ խորհրդակցութեան, կազմուհցաւ Կեդրոնական Հանդանակիչ Ցանձնախումը մը, նախագահութեամը Գերչ Կաթողիկոսական Պատուիրակին:

Խորհրդակցական սոյն Ժողովին մասնակցող ապայիններէն չատեր, խանդական ու ապային կարեւորագոյն դործի մր չուրջ հաւաջական հիդերով բոլորուելու սրտապնդիչ այս մինոլորտէն, տեղւոյն Մահրդաբական հիդերով բոլորուելու Միւններու րաժինը:

Այս առթիւ, Հայկական տեղական թերթերուն դրկուեցան հետեւեալ պաչտօնական հաղորդադրութիւնն ու Գերչ. Կաթողիկոսական Պատուիրակին կոչը` ուղղուած իր պատուական ժողովուրդին.—

#### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ի գիտութիւն մեր պատուական ժողովուրդին կը հաղորդենք թէ Չորեքշաբթի, 29 Յուլիսի երեկոյեան, Առաջնորդարանի Դահլիճին մէջ կայացաւ հաւաքոյթ մը, որու ընթացքին համայնքիս ծանօթ ազգայիններու խումբ մը ներկայացուեցաւ Երուսաղեմի Ամեն Պատրիարք Տ ԵՂԻՇԷ ԱՐՔ . ՏԷՐՏԷՐԵԱՆի և ըստ արժանւոյն պատուասիրուեցաւ:

Այս առթիւ անհրաժեշտ լուսարանութիւններ տրուեցան Ս. Յարութեան Տանարի վերանորոգութեան և անոր ազգային նշանակութեան մասին։ Որպէսզի մեր Թեմը եւս, ինչպէս համազգային հանգանակութեան արշաւին մասնակցող միւս բոլոր Թեմերը, լիովին կատարէ իր ազգային պարտականութիւնը՝ դարաւոր այս ժառանգութեան պահպանման համար, յարմար դատւեցաւ տեղւոյն վրայ իսկ կազմել Հանգանակիչ Յանձնախումբ մը, ըստ հետեւեալին.

Նախագահ՝ Գերչ․ Տ․ Բարգէն Արքեպս․ Ապատեան, Կաթողիկոսական Պատուիրակ։ Փոխ-Նախագահ՝ Հոգշ․ Տ․ Յարութիւն

Ծ. վրդ. Մուշեան, Պատուիրակի փոխանորդ։

Ատենապետ՝ Տիար Սարգիս Տիարպէքիր**եա**ն։

Фոխ-Ատենապետ՝ Տիար Արմէն Պերկամալի։

Ատենադպիր՝ Տիար Գէորգ Սարաֆեան։ Փոխ-Ատենադպիր՝ Տիար Տիգրան Միւրէքեան։

Գանձապահ՝ Տիար Մանուկ Շիրինեան։ Գործադիր Մարմին՝ Տիարք Նուպար Քէքլիքեան, Պարգեւ Պարսամեան, Փանոս Էօրնէքեան, Պարգեւ Տէր Կարապետեան, Գրիգոր Դերձակեան, Ժագ Մերկերեան։

Խորհրդական անդամներ՝ Տիարք Գրիգոր կառավարեան, Սարգիս Քեթէն, Սարգիս Մարաշլեան, Գալուստ Տէր Մարտիրոսեան, Տքթ. Եփրատ Պայրամեան, Ժիրայր Էքշեան, Ասատուր Գարակէօզեան, Տքթ. Անդրանիկ Աջապահեան, Հայկ Էմիրեան, կարապետ Էքշիեան, Յովսէփ Ճէրէնեան, վահագն Իսրայէլեան, Ներսէս կէօգիւգարայեան, Բիւզանդ Գուշեան, Արշակ Ծառուկեան, Վահէ Չըննոզեան, Ռաուլ Պետիկեան, Յակոր Սէֆէրեան, Օննիկ Փանոսեան, Ահարոն Թըլըսըմեան, Պօղոս Սարաֆեան, Սանթիակօ Պահչէնեան, Մելքոն Շիրիքնեան։

վերոյիչեալ Ցանձնախումբին ի պաշտօնէ մաս կը կազմեն նաեւ տեղւոյս Հոգեւորա

կանները :

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

#### 4 N 2

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԵՐՈՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Անգամ մր եւս փորձի կը դրուի, Հարաւային Ամերիկայի երկիրներու սիրելի և ազնուական Հայ ժողովուրդ, քու հայու ոգիդ և գիտակցութիւնդ, նոր, կարեւոր և անյետաձգելի հանգանակութեան մը առիթով, որուն մասնակցիլ՝ իւրաքանչիւր ճըշմարիտ Հայ մարդու ոչ միայն րարոյական պարտաւորութիւնն է, այլ նաեւ անխուսափելի պատասխանատուութիւնը, վասնգի ան կը վերաբերի Երուսաղէմի Ս. Քաղաքին մէջ Ս. Ցարութեան Տաճարի նորոգութեան և վերաշինութեան այժմէական խնդրոյն և մեր հայրերու դարաւոր զոհողութեամբ, աphiling a huiumfny abuf phyniud ni abq ժառանգ թողած իրաւանց պաշտպանուp-bmu:

Այդ իրաւունքները Սուրբ Վայրերու մէջ մեր ժողովուրդը կը դնեն հաւասար գծի վրայ մեծ ազգերու հետ, ու մեր փոքր բայց մարտիրոս Եկեղեցին կը բարձրացնեն տա– րածուն և բազմանդամ կաթոլիկ և Օրթոտոքս Եկեղեցիներու հաւասարազօր մակարդակին։ Քրիստոնէական մեծագոյն Ոստա– նին, Ս. Քաղաքին մէջ է ուրեմն, որ մեր Ազգն ու Եկեղեցին կը ճանչցուին ու կր փաոաւորուին միջազգային չափանիշով և կր գնահատուին արժանիքները մեր բարոյահոգեւոր և իմացական տաղանդին: Հայրենի հողէն դուրս, հո՛ն միայն Հայր կրնայ ազնիւ հպարտութեամբ պարծիլ իր պատմութեամբ, Եկեղեցիով և լոյսի, ճըշմարտութեան և հաւատքի նուանման ճամրաներուն վրայ տարած իր սխրագործութիւններուն փաստովը, հաստատ տուեալներու վրայ։

Հայ Երուսաղեմի փառքը անտարակոյս արդիւնք է տնօրինական սրրավայրերուն, որոնց հանդէպ մեր ժողովուրդը տածեց խորունկ սէր և անհուն պաշտամունք այն օրերեն ի վեր, երբ Քրիստոնէութիւնը լուսաւորեց իր հոգին։ Առանց անոնց, նոյնպէս կարելի պիտի չըլլար ըմբռնել գոյութիւնը Սրբոց Ցակորեանց ազգապարծան Մայրավանքին, որ իբրեւ միակ մեծագոյն ժառանգութիւնը մեր անցեալէն մեզի մնացած և նաեւ որպէս նոր օրերու առաքելութիւն, կը ստանայ կրկնակի արժէք և կարեւորութիւն՝ Սփիւռքի մեր ազգային հոգեւոր գոյութեան պահպանման իբրեւ երաշխիք։

ՄԵծ է մեր ժողովուրդը, որովհետեւ ունի մշակութային իրականացումներ, անկողոպտելի գանձարանը հոգեւոր ստեղծագործութեանց, որոնց համար չսակարկեց
ան պատմութեան ամենադժխեմ օրերուն
իսկ, ո՛չ իր նիւթական կարողութիւնները և
ո՛չ նոյնիսկ իր արիւնը:

ժամանակն է որ փաստենք անգամ մը եւս, թէ արժանի յաջորդներն ենք մեր հայրերուն ու գիտակից ժառանգորդները անոնց հոգեւոր և բարոյական մեծութեանց։

Այս ըմբոնումն է որ կը վստահեցնէ մեզ, թէ Հարաւային Ամերիկայի հայաբնակ երկիրներու մեր ժողովուրդը պիտի գայ վկայելու նորէն գիտակցութեամբ, սիրով, hաւատքով և հայու վայել առատաձեռնութեամբ՝ արժանաւորութ-իւնը իր Հայու կոչումին, ընդառաջելով սրտառուչ կոչերուն Ամենայն Հայոց սիրեցեալ մեր Հայրապետին և Երուսաղէմի Ս․ Աթոռի արժանընտիր Գահակալին՝ Ամենապատիւ Տէր Եղիչէ Պատրիարքին, որոնց հեղինակաւոր ձայնին կը միացնենք մեր ալ տկար ձայնը, տալու սրտագին ուրախութեամբ Ս. Ցարութեան Տաճարի նորոգութեան ֆոնտին, իրականացնելով նոյնիսկ աւելին՝ որ հանգանակիչ նուիրակութիւնը կ'ակնկալէ մեզմէ։ Կը հաimmuse np ny nf upoh buiumph npbit պատրուակով , նկատումով և կամ պատճա– ռարանութիւնով իր ազգային այս մեծ պարտքէն:

Մեր սրտագին փափաքն է որ հանգանա-

կութեան բարեյաջող արդիւնաւորութեամբ մխիթարուած վերադառնայ մեզմէ Երուսաղէմի Ամենապատիւ Գահակալը, որ Իր հետեւորդներով առաջին պատրիարքական շնորհարեր այցելութիւնը շնորհեց Հարաւային Ամերիկայի մերազն գաղութներուն:

կաղօթենք որ Աստուած ձեր զոհողութիւններուն փոխարէն վարձատրէ ձեզ իր օրհնութեամբ, և գալիք սերունդներ երախտագիտութեամբ յիշեն ձեր անունը։

> Սիրոյ Ողջունիւ և Օրհնութեամբ Աղօթարար ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՏԵԱՆ Հայրապետական Պատուիրակ Հարաւ–Ամերիկահայոց

#### ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ ՈՒՐՈՒԿՈՒԱՀԱՑՈՒԹԵԱՆ.

Buche 30, Հինդչարթի, Պատրիարջ Սրրադանը օգի ճամրով մեկնեցաւ Մոնթեthinto, tups wightnest for muine suմար Ուրուկուայի Հայ գաղութին: Նորին Ամենապատուութեան կ'ընկերակցէին կաթողիկոսական Պատուիրակ Գերչ. S. Բարդէն Արբեպս. Ապատեան, Նուիրակ Հոգչ. S. Bակոր Վրդ. Վարդանեան և Հոգչ. S. Շահե Վրդ. Անենեան: Մինչեւ օդակայան Պատրիարջ Սրրադանին ընկերացան Պատւիրակի փոխանորդ Հոդ: S. Bարութիւն Ծ. Վրդ. Մուչեան, Կեդրոնական Վարչութեան կողմ Shար Գ. Սարաֆեան և Shար 8. Ճէրէնեան, Տիկնանց Կազմակերպութեան կողմ է Տկն . Ռօգա Դանի էլեան , Հ. Ա. Ե. Ե. Կազմակերպութեան կողմ է Տիար 8. նուսուֆեան և այլ ազգայիններ։

Մոններիաերյի մեջ Նորին Ամենապատուունիւնը պաշտոնական այցելունիւն տուաւ Ուրուկուայի Ազգային Խորհուրդի Նախագահ Տիար ձիանասնասիոյին և Մոններիտերյի Քաղաջապետ Տիար Լետո Արրոժո Թորբեսին։ Տեսակցունիւններուն ընթացջին, վերոյիչեալ պետական բարձրաստիճան անձնաւորունիւնները գնահատանջով արտայայտուեցան Ուրուկուահա-

յունեան մասին, չեչտելով նէ Հայեր մեծապէս սատարած են երկրի յառաջդիմունեան և վերելջին։

Ապա, Ն. Ամենապատուութիւնը, իր հետեւորդներով, ծաղկեպսակ մը գետեղեց Կառավարչատան հրապարակին մէջ դանուող Անկախութեան Յուշարձանին վրայ, ուր, յատուկ կարդադրութեամբ մը, բանակայիններ պատուոյ պահակ կեցած էին։

Ն. Ամենապատուութիւնը այցելեց Նաեւ Ուրուկուանայ դպրոցներն ու ակումրները, աժենուրեր արժանանալով չերմ և սրաբաց ընդունելութիւններու:

ի պատիւ Պատրիարը Սրբազան Հօր և իր չքախում թին, Ուրուկուանայ Թեմի կեդրոնական Վարչական Խորհուրդը ժողովրդական մաշկերոյթ մր սարջեց Շարաթ, Օգոստոս մէկի երեկոյեան։ Ճայկերոյթին հրաւիրուած էին նաև աւելի ջան երկու հարիւր Reportnemswith: Buthtonifte pugnemb յայտարարեց Ուրուկուանայ կեղը. Վարչ. Wagingpap Umbbumuhan Spup Just 2mդրրեան: ձաչկերոյնի ընթացջին խոսջ wahis Repachacus wine Plante Lantenp Laffe Lage S. Choute V. Lpg. Sommishub, Հոգլ. S. Bակոր Վրդ. Վարդանեան, Հոգլ. S. Tuit Lpg. Ustatus, 4top. Lupy. Unpanepap Umbbungupp Shup Britanible Ազամեան և Տիար Գարրիէլ Սարդիսեան: Գործադրունցաւ գեղարունստական Հոխ յայտագիր մը։ Փակման խօսքը ըրաւ Պատրիարը Սրրադանը, որ դանազան չինիչ օրինակներով յորդորեց ներկաները աժուր կառչած մնալ Հայկական սրրութիւններուն և աւանդութիւններուն:

Օգոստոս 2, Կիրակի, Պատրիարջ Սրբադանը նախագահեց եկեղեցական արարողութիւններուն, Ս. Պատարադի ընթացջին տալով նաեւ իր պատգամը Ուրուկուահայութեան։ Ցաւարտ Ս. Պատարադի, Ն. Ամենապատուութիւնը կատարեց հիմնարկէջի արարողութիւնը նոր կառուցունլիջ եկեղեցիին՝ դետեղելով Ս. Սեղանին հիմնաջարը։

նոյն օրուան յետմիջօրէին Պատրիարջ Սրբադանը իր չջախումրով վերադարձաւ Պուէնոս Այրէս:

## ԱՐՍԼԱՆԵԱՆ ԱԶԳԱՑԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԻՍԱՄԵԱՑ ՀԱՆԴԷՍ

Օղոստոս 2, Կիրակի, Մոնթէվիտէոյէն
վերադառնալէ անժիջապես հաջ, Պատրիարջ
Սրրադանը նախադահեց Պուէնոս Այրէսի
Արսլանեան Ազդային Վարժարանի կիսաժհայ հանդէսին, որ տեղի ունեցաւ «Հայ Կեդրոն»ի սրահին մէջ, ծնողներու և խուռն
բազմունեան մր ներկայունեան:

Գեղարուեստական յայտագրի դործադրութենչն հար, որուն ընթհացրին խումր մր իրախուսիչ և հայկականութեամբ լի հանղէսը, Ն. Ամենապատուութիւնը ըսաւ.—

Գերշ . Սրրազան եղբայր , Հոգշ . Հայրեր և յարգելի ծնողներ .

ինծի հետ միասին աւելի քան երկու ժամեր ներկայ եղաք մտքի և հոգիի այն տողանցքին, որ Արսլանեան Ազգային Վարժարանը այս բեմին վրայ բերաւ, արտայայտելով ինքզինքը իր արտասանութիւններով, երգերով, պարերով և տրամախօսութիւնով։



Պսակի զետեղում և յարգանք Ուրուկուայի Անկախութեան Յուշարձանին առջեւ։

աչակերաներ Ն. Աժենապատուու Թեան ժատուցին Ս. Ցարու Թեան Տամարի նորողուԹեան Հանդանակու Թեան իրենց Վարժարանին ժասնակցու Թիւնը ներկայացնող 75,000
փեսոյի դուժարը, խօսք առաւ Վարժարանի
Տեսուչ Հողչ. Տ. Ցարու Թիւն Ծ. Վրդ.
Մուչեան, որ երախտադիտու Թեան և չնորՀակալու Թեան անկեղծ խօսքեր ուղղեց Սբրբաղան Հիւրին: Հրաւիրուելով փակել սոյն

Անշուշտ դիւրին է մտածել, առանց մեծ երեւակայութեան, թէ տարիներ առաջ երբ այս պնդակազմ, ժրամիտ և իրենց գեղեցիկ ներկայութեամբ ինքզինքնին այսօր ցուցնող մանուկները այս դպրոցը կու գային իրենց ճիղճ մարմիններով, ճիղն մտքով և հոգիով՝ որոնցմէ փոշին կը թափէր միայն, ինչպէ՛ս տարիներու ընթացքին՝ շնորհիւ այս կեդ– րոնին ու նաեւ վերին հսկողութեան կրցան ըլլալ այս արի մտքի և հոգիի զինուորները ձեր աչքին առջեւ:

Մեր բոլորին աչքին պարզուող այս տեսարանին առջեւ սակայն, գնահատանքի արժանացող միակ անձնաւորութիւնը ան է, որ անոնց սրտին, մտքին և հոգիին կերտանան դարբինը հանդիսացած է, որ դպրոցին արձանագործը եղած է — մեր և ձեր սիրելի Ցարութիւն Ծ․ Վրդ․ Մուշեանը։

Այսօր, այս օտարութիւններուն մէջ, չի բաւեր միայն որ մարդ ուսուցիչ ըլլայ։ Չի բաւեր միայն որ մարդ կարգ մը գիտելիքներ իւրացուցած ըլլայ, զանոնք աշակերտինչ որ անոնք այնքան գեղեցիկ կերպով և նարպկօրէն ցուցադրեցին այս երեկոյ։

Մենք, սիրելի ծնողներ, զօրանոցներ չունինք արտասահմանի մէջ։ Մեր զօրանոցները մեր վարժարաններն են, իսկ մեր բանակներն ու զինուորները՝ մեր աշակերտները։ Անո՛նք միայն կրնան ապահովել մեզի
յաղթանակը, անո՛նք միայն կրնան ապահովել մեր ազգային գիտակցութիւնը։

Արտասահմանի մեջ, ամեն Հայ դպրոց Հայաստանեն բերուած ափ մը հող է։ Մենք այդ հողին վրայ՝ կենալո՛վ՝ միայն կը գի–



Ն․ Ամնապատուութիւնը կը կատարէ Մոնթէվիտէոյի հայկական նոր եկեղեցիի հիմնարկէքի արարողութիւնը։

ներուն ջամբելու համար։ Տակաւին, չի բաւեր միայն որ մարդ գիտական, պատմական, հաշուական գիտելիքներով տոգորւած ըլլայ՝ զանոնք մանուկներուն բաշխելու համար։ Անհրաժեշտ է որ մարդ արուեստագէտ ըլլայ, ներշնչեալ ըլլայ, կարենալ ներշընչելու համար այս մանուկներուն այն՝ տակցինք մեր Հայութեան։ Մենք այդ հոդին վրայ կենալո՛վ միայն կը դառնանք իսկական Հայ և կը խօսինք իբրեւ Հայ։ Մենք այդ հողին վրայ կենալո՛վ միայն Հայկական նկարագիր և Հայկական շունչ կ՚ունենանք, և կը խօսինք մենք մեզի ու աշխարհին՝ իբրեւ Հայ և իբրեւ Հայու խօսք։

## 2. F. C. ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՈՑ ՃԱՇԿԵՐՈՑԹ.

Օդոստոս 3, Երկուչարթի, Պատրիարջ Սրրադանը կէսօրուան Տաչի հիւրը հղաւ Արսլանեան Ազգային Վարժարանի Տեսչու-Թեան և Ուսուցչական Կազմին։ Ն. Ամենապատուութեան կ՚ընկերանային Գերչ. Կա-Թողիկոսական Պատուիրակը և եկեղեցական դասը։ Ճաչի աւարտին, Պատրիարջ Սրրագանը ջաջալերանջի և յարատեւման խօսջեր ուղղեց ուսուցչական կազմի անդամներուն։

Նոյն օրը երեկոյեան, Ն. Ամենապատւութիւնը նախադահեց Հ. Բ. Ը. Միութեան
58-րդ. Տարեդարձի Հանդէս-հաչկերոյթին,
որ տրուեցաւ Գասթելար պանդոկի շջեղ
սրահին մէջ, Պուէնոս Այրէսի տեղական
Մասնահիւդի Վարչութեան կողմէ։

ձաշկերոյթի ընթացքին գործադրունցաւ դեղարունստական Հոխ յայտագիր մը, և խօսք առին Գերչ․ Տ․ Բարդէն Արջևպս․ Արպատեան, Հիւրարար Պուէնոս Այրէս դրտենուդ հատրակի ախոյհան Տիդրան Պետրոսևան, Աթոմական Գիտութիւններու դասախոս Պրն․ Վ․ Բարսեղեան և Հ․ Բ․ Ը․ Միութեան տեղական Վարչութեան Ատենապետ Պրն․ Հայկ Էմիրեան։

Երդերով և Հայրենասիրական արտասանութիւններով ստեղծուած Լերմ մ Թնոլորտին մէջ փակման խօսքը ըրաւ Ն. Աժենապատուութիւնը, որ վեր առաւ Բարեգործական ազգապարծան Միութեան դերը դադութէ դաղութ ու անոր չուրջ Համախըմբուած պատուական ազգայիններու ազնիւ ողին:

#### ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Օգոստոս 4, ԵրեջչաբԹի, Պատրիարջ Սրբադանը երեկոյեան ընթրիջի Հիւրը եղաւ Տկն Սիրվարդ Մեսրոպեանի Հրաւիրուած էին նաեւ պատկառելի Թիւով ազդայիններ։

Օղոստոս 5, Ձորեջչարթի, Պատրիարջ Սրրագանը երեկոյեան ընթրիջի հիւրը եղաւ Պրն. Նուպար Քէջլիջեանի, վերջինիս բնակարանին մէջ, ուր չատ հաճելի չրջանակի մը մէջ անցուց գիչերը և ուշ ատեն վերադարձաւ Առաջնորդարան։

## ԱՑՑԵԼՈՒՔԻՒՆ ՍԱՆ ԲԱՒԼՈՑԻ ՀԱՑՈՒԹԵԱՆ

Օգոստոս 6, Հինդչարթի, Պատրիարբ Սրբագանը, ընկերակցութեամբ Հարաւային Ամերիկայի Կաթեոգիկոսական Պատուիրակ Գերաբնորն Տ. Բարդեն Արջեպս. Ապատbuild, Lags. S. Bulan to Tust Lupque mbuibbene, out Swapped Shibbgue Inchine Այրկսկն Սան Բաւլօ։ Քոնդոնիասի օդակայանին մէջ Պատրիարը Սրրազանին վերապանունցաւ պայտոնական և ժողովրդային չքեղ ընդունելու թիւն մր։ Օդանաւի սաևզուխներուն գիմաց, Ն. Ամենապատուութիւնը աւանդական սովորութեան համաձայն օրենեց իրեն ներկայացուած աղն ու հացր, և ծանօթացաւ գինք դիմաւորող անձնաւորութիւններուն հետ ։ Սան Բաւլոյի րոյոր եկեղեցիներու ներկայացուցիչները, Սան Բաւլոյի Վարչութեան անդամները, եկեղեցական հայրերը, ինչպէս նաեւ Սուրիոյ Հիւպատոսը և բաղմաթիւ թերթերու թրդթակիցներ և դադութի երեւելի անձնաւորութիւններ շրջապատեցին Պատրիարը Սրրրադանը և դայն առաջնորդեցին օդակայանի պաշտոնական դահլիճը, ուր բարի դալուստի խոսքեր արտասանեցին Սուրիոյ Հիւպատոս Տբթ. Ռայիտ էլ Գապաանի, Յոյներու Առաջնորդը, Յոյն Կաթեոլիկներու Առաջնորդական Փոխանորդը, ինչպես նաև Վարչութեան Ատենապետ Տիար Պօյաձևան: Պատրիարջ Սրրագանը, զգացուած իրեն եղած այս ջերմ ընդունելու Թենկն, չնորհակալունեան և օրհնունեան խօսբը արտասանեց և ապա սրահէն դուրս խոնուած րազմութեան ծափահարութիւններուն և խանդավառու թեան մէջէն ուղղուհցաւ դէպի ին ընաչարժը։ Հարիւրաւոր ին ընաչարժներու չթերքը, պատուոյ ոստիկաններու առաջնորդութեամբ, կարեց Սան Բաւլոյի դեղեցիկ պողոտաները, և Հայոց Եկեղեցիին առջեւ վերակացմունցաւ Թափօր մը՝ որ «Հրաչափառ»ի երդեցողութեամբ Ն. Ամե-Նապատուութիւնը բարձրացուց եկեղեցի։ Ազօթելն հար, Պատրիարը Սրրադանը հիւրասիրունցաւ եկեղեցիին կից Հայկական Սրահին մեջ, ուր յանուն Սան Բաւլոյի Հայութեան բարի դալուստի խօսբ մը կարդաց

վարչութեան Ատենապետ Տիար Պօյաձեան։ Պաշտոնական արտայայառւթեւններէ վերք, ժողովուրդը մոտեցաւ Սրրադան հերին, համրուրելու համար Ն Ամենապատուութեան ԱՏր և յաղեցնելու՝ Ս. Տեղևաց կարոտը:

Գիջերը, Պատրիարը Արրագանը առաջնորդուեցաւ «Տանուպիս» հիւրանոցը, ուր անցուց Սան Բաւլս իր այցելութեան հինդ շրերը։

0 դոստոս 7, Ուբրախ, առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարը Սրբազանը ընդունեց եւ Աժենապատութւթիւնը հայեց Կեդրոնական Վարչութեան և կարգագիր Ցանձնախում թի անդաններուն հետ :

ձույկն անժիջապես ևաջ, Պատրիարջ Սրթագանը ընդունեց Յոյն Կաթոլիկներու Առաջնորդին, ինչպես նաեւ բոլոր ջրիստոնեայ եկեղեցիներու ներկայացուցիչներուն այցելունիւնները։

Նոյն օրը, կ. վ. ժամը 4-ին, Պատրիարը Սրրադանը պաշտոնական այդելութիւն մր աուսու Սան Բաւլո ջազաքի Կառավարչին՝ Ն. Վոեմութիւն Ատեմար Տէ Պարրոսի,



Ն. Ամենապատուութիւնը, շրջապատուած հայ եկեղեցականներէ և այլ յարանուանութիւններու ներկայացուցիչներէ,
Ման Բաւլոյի օդակայանին մէջ։

Պրազիլիոյ Կեղրոնական Վարչութեան անդանները ժամը 11-ին՝ Սուրիոյ Հիւպատոս Տրթ. Ռաչիտ էլ Գապպանին ժամը 12-ին՝ Լիրանանի Հիւպատոսը, որ ցաւ յայտնեց թե չէր կրցած նախորդ օր օղակայան դիմաւորութեան դալ, բաղարէն բացակայ ըլլալուն պատճառաւ:

Utuophi, «Swincupo» spepwinghi dtg,

Գամրոս Էլիդիոս պալատին մէջ։ Կառավարիչը, չրջապատուած իր օդնականներով, չատ սիրալիր և Հետաքրքրական խոսակցութիւն մը ունեցաւ Ն. Ամենապատուութեան հետ, որուն ընթացքին մասնաւորաբար չա-Հաղրդոունցաւ Սուրբ Տեղևաց վիձակով, և ըսաւ Թէ իր կեանքին մեծադոյն փափաքր եղած է այցելել քրիստոսակոխ Սուրբ Վայրերը։ Պատրիարջ Սրրազանը Ն. Վսեմութեան առաջարկեց որ պահ մը ինջզինք ադատաղրէ իր պաչտօնին պատասխանատուութիւններէն, այցելէ Սուրբ Երկիր և ընդունի հիւրը ըլլալ Երուսաղէմի Հայ Պատրիարջարանին։

ժամը 5-ին, Ն. Ամենապատուութիւնը Համակրութեան այցելութիւն մը տուաւ Սան Բաւլոյի պատուական Հայորդիներէն Տիար Երջանիկ Գըսաձիջեանի դրամատունը («Պանջա Ինտիրենտեցիա») և յայտնեց իր ուրախութիւնը այն իրողութեան Համար, որ Հայեր իրենց ձեռներէցութեամբ և աշխատասիրութեամբ կրցած են նախանձելի դիրջեր դրաւել Պրագիլիոյ տնտեսութեան մէջ: Այս առթիւ, իշխանական դեղեցիկ ըդպայումով մը, Տիար Ե. Գըսաձիջեան Պատրիարջ Սրրազանի տրամադրութեան տակ դրաւ 10,000 տոլարի պատկառելի դումար մը, դործածելու Համար Ս. Ցարութեան Տաճարի նորոդութեան:

ժամր 5.30-ին, Պատրիարք Սրբադանը պայաօնական այցելութիւն մր տուաւ Սան Fuelash Lunwemmber b. 4. Shup Fitteթես Մայային, Քաղաբապետարանի մեծ quispspie sty: U, mappe, fuquemպետր, շրջապատուած իր օգնականներով, purply quincump gladeghy pourt of itens, Ն. Ամենապատուութեան ծանօթացուց Սան Բաւյօ թաղաքի յատակագիծները, և յատկապես շեշտեց Թէ ինչպէ՛ս Պրագիլիոյ այս մեծագոյն ջադաքը արադօրէն և դեղեցկօրէն կը զարդանայ, ու իր րարձր չէնքերով և արդիական ոճով կրնայ բարդատուիլ Եւրոպայի և Ամերիկայի մեծագոյն քաղաբներուն ձևա։ Պատրիարը Սրրագանը չնոր-Հակալու թիւն յայտնեց և օրհնեց Քաղաբապետարանի և անոր Հարտարապետներուն չինարարական գործը, և յայտնեց իր դոհ ապաւորութիւնները Սան Բաւլօ քաղաքեն:

Երեկոյեան, Պատրիարը Սրբազանը ընդունեց Սան Բաւլոյի ԹերԹերու ներկայացուցիչները, և պատասխանեց անոնց Հարցումներուն, յատկապէս Ն. Ս. Պօղոս Ձ. Պապի Երուսաղէմ այցելուԹեան, Սուրբ Տեղեաց և եկեղեցիներու փոխ-յարաբերու-Թիւններու մասին։ Այս առԹիւ, Պատրիարը Սրբաղանը չնորՀակալուԹիւն յայտնեց Թերթերու ներկայացուցիչներուն այն դեղեցիկ յօղուածներուն և Լերժ արտայայտութիւններուն Համար, որով Սան Բաւլոյի մամուլը արձադանդ Հանդիսացած էր Ն. Ամենապատուութեան այցելութեան։

Գիլերը, Պատրիարը Սրբադանը ընթրիջի Հիւրը հղաւ Տիար Ֆիլիփ Տէրտէրհանի ընակարանը։

Օդոստոս 8, Շաբաթ, առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարը Սրբազանը փոխ-այցելութեան դնաց Ցոյն Օրթոտոըսներու եկեդեցին ու Առաջնորդարանը։ Ն. Աժենապատուութեան ընկերացան իր չջախումըն
ու Տիար Նեձիպ Ռրաբալլա։ Ցոյներու Մայր
Եկեղեցիի մուտքին, Պատրիարը Սրբազանը
դիմաւորուեցաւ եկեղեցական դասին և Ցոյն
Համայնքի Կեդրոնական Վարչութեան կապմին կողմէ, և առաջնորդուեցաւ դէպի Ս.
Խորան ու կարձատեւ եկեղեցական արարոդութենկ մը հար Հիւրասիրուեցաւ Առաջնորդարանին մէջ։

Ժամը 11-ին, Ն. Ամենապատուութիւնը այցելեց Կաթոլիկներու Սր. Քրիստափոր Տր Լուզի Եկեղեցին, ուր, եկեղեցական կարճ արարողութենէ մը ետթ, բարի գաւլուստի ճառ մը կարդաց ԿիլՀէրմ Պօնօմօ Եպիսկոպոս։ Ստորեւ յիչեալ ճառը, զոր կու տանը Թարդմանարար.—

Նորին Ամենապատուութիւն Եղիչէ Արքեպս - Տէրտէրեան -

Ձերդ Սրբազնութիւնը թող ինծի թոյլատրէ սոյն խօսքերը ուղղելու Ձեզի Ֆրանսերէնով, առանց միջնորդի, որպէսզի կարենամ ինքզինքս արտայայտել ուղղակի կերպով և Ձեզի փոխանցել իմ ամենէն խոր զգացումներս, որոնցմով ինքզինքս լեցուած կը զգամ այս պահուս։

Մենք զմեզ հպարտ և մանաւանդ պատւուած կը զգանք այս այցելութեամբ, զոր
Ձերդ Ամենապատուութիւնը բարեհաճեցաւ
տալ մեզի։ Կը խնդրենք որ ընդունիք մեր
հղբայրական բարի գալուստի ողջոյնը Աստուծոյ այս տան, ինչպէս և Ս․ Խաչով
օրհնեալ մեծ Պրազիլիոյ մէջ, որ տարիներ
առաջ հիւրընկալեց վեհանձն և հերոսական
Հայ Ազգի քաջ զաւակները․ զաւակները ժո-

դովուրդի մը, որ միշտ մեր գուրգուրանքին և յարգանքին արժանացած է, աշխարհի տալով իր նահատակութեան վկայութիւնը՝ Քրիստոսի հանդէպ իր ցուցաբերած հաւատարմութեամբ։

կը փափաքիմ նաեւ այս առիթով յայտնել մեր խոր ուրախութիւնը միջ-եկեղեցական համերաշխութեան այն բարձր ոգիին համար, զոր կ՝ապրինք շնորհիւ երկու կողմերէ տարուած ճիգերու, անհետացնելու համար այն պատուարները՝ որոնք թերեւս անցեալի մէջ մեզ բաժնած են, և վերստին գտնելու համար մեր միութիւնը՝ այս անգամ միշտ եղբայրօրէն իրականացած մեր Փրկչին արեան և սիրոյն մէջ:

Պէտք է նշեմ նոյնպէս որ ժամանակը եւս նպաստաւոր է եղբայրներու միջեւ այս հանդիպման, հետեւելով այն Ոգիին՝ որ շատ հաւատարմօրէն կ'արտացոլէ մեր Փրկչին վերջին խօսքերը, երբ Ան պատուիրեց որ ամէնքը մէկ ըլլան:

Մեր ուրախութիւնը այնքան աւելի մեծ է երբ Ձերդ Ամենապատուութիւնը կը գրտ-նենք որպէս Պատրիարք Երուսաղէմի և պահապան Ս․ Ցարութեան, այն սրրատեղիներուն՝ որոնք նուիրագործուած են մահովը մեր Տիրոջ, Աստուծոյ և Փրկչին՝ Ցիսուս Քրիստոսի:

Արդեօք կրնա՞նք պահել մեր նախանձը, երբ կը մտածենք թէ Ձերդ Ամենապատուութիւնը կը բնակի Երուսաղէմի՝ Քրիստոնէութեան այդ բարձր վայրին, Ս. Քաղաքին մէջ։ Խոնարհաբար կը խնդրենք Ձեզմէ յիշել Ձեր աղօթքներուն մէջ անոնք՝ որոնք հոս կը գտնուին մեծարելու Ձերդ Ամենապատուութիւնը, ինչպէս նաեւ Ձեր համեստ սպասաւորը, որ Ձեզի կը խօսի՝ Պօնօմօ Եպիսկոպոս։

Պէտք է շնորհակալութիւններս յայտնեմ նաեւ ներկայութեանը համար սիրելի բարեկամներու, պատկան իշխանութիւններու և տեղական մամուլի ներկայացուցիչներուն, սակայն մանաւանդ այն այցելութեան հատար՝ զոր մեզի կը շնորհեն հոգեշնորհ հայրերը՝ որոնք կ՝ընկերակցին Ձերդ Ամենապատուութեան Լատին Ամերիկայի Ձեր այս ճամրորդութեան ընթացքին:

Թող Աստուած պաշտպանէ Ձեր Ցարգելի

Անձնաւորութիւնը և եկեղեցական այն անդամները որոնք Ձեզի կ՝ընկերակցին։

Այսօրին, Պատրիարջ Սրրազանը հիւրը հղաւ Պրն. Պետրոս Ձալեանի բնակարանը։
Ճայէն ետջ, Ն. Աժենապատուութեան կողմէ Հոզչ. Տ. Ցակոր Վրդ. Վարդանեան, ընկերակցութեամբ Կեղբոնական Վարչու-թեան անդամներուն, փոխադարձ այցելու-թեան դնաց Հայ Կաթողիկէ և Հայ Աւնտարանական համայնջներուն։ Նոյն դիչեր, Պատրիարջ Սրրազանը ընթրիջի հիւրը եղաւ Սան Բաւլոյի գաղութին իր երկարամեայ ծառայութիններով ծանօթ Տիար Անտրէ Ճաֆէրեանի բնակարանը։

Օդոստոս 9, Կիրակի, Պատրիարջ Սրրադանը պատարագեց Սան Բաւլոյի Հայոց Եկեղեցիին մէջ և ջարողեց հաւատացեալ խուռն բազմութեան, գայն հոդեւորապէս միրթարելով և ջաջալերելով:

կկսօրին, Ն. Աժենապատուութիւնը ձայի հիւրը եղաւ Տիար Յովսկի Տիչյկջկնանի բնակարանը, ուր այս առթիւ հրաւիրուած կր ճանւ Սան Բաւլոյի աղդայիններկն խումը մը:

Նոյն դիչեր, Պատրիարջ Սրրազանին ի պատիւ մեծ Տաչկերոյի մր տրուեցաւ Սան Բաւլոյի Հայ Եկեղեցւոյ և Սրահի բարերար երջանկայիչատակ Ռրոջալլա Թահանի որդիներու փառաւոր ընակարանին մէջ։ Հրաւհրուած էին ջրիստոնեայ համայնջներու եկեղեցական պետերը, Արաբական երկիրեներու հիւպատոսները, Պրադիլիոյ Կեդրունաւ Վարչութեան անդամները, ինչպէս նաեւ պատկառելի խումբ մր Հայ Թէ օտար երեւելի անձնաւորութիւններու։ Ցանուն Ռրոջալլա ընտանիջին բարի դալուստի հառնր կարդաց Տիար Ռ. Ռըսջալլա:

Պատրիարը Սրբաղանը չնորհակալութիւն յայտնեց իրեն եղած այս պատիւին համար, օրհնեց ծերունագարդ մայրը Ռրսթալլա եղբայրներուն, անոր դաւակներն ու թոռները ու մադթեց որ անոնը չարունակեն րերարները:

Օգոստոս 10, Երկուչաբթի, Պատրիարջ Սրբագանը ընդունեց Հայ կազմակերպու-Թիւններու ներկայացուցիչներուն այցելութիւնը, իսկ կէսօրին ճաշեց Տիար Երջանիկ Գրտածիջեանի բնակարանը. Հրաւիրուած էին նաևւ բազմաթիւ Հայ թէ օտար երևւևյիներ:

4 tropt's lung b. Hathungumment Habip mightly Optimply Jonath strep h Umb Furingh before abdungit Phepphene duղենա»ի և «Սէէրիա»ի նորակառոյց չէնքերր։ Նոյն գիշեր, Հայկական Սրահին մեջ Smylphingle of inputagine for unumpe Uthbarmange Spephi: None waft Umbimupon Shup Tojustant, Lupurajta Ustophungh 4mp. Ammehpul Abpy. S. Fungto Upp-Luju . Unjumbuh , Umb fuejnjh snakenp Հովիւ Հոդ . S. Շնորեր Վրդ . Գասպարհան h Shor A. Apupujia, ngfashine Sudap Sungample mygline Shelip Concumptiff 2mյոց Պատրիարգին և յայտնելու իրենց ուրախութիւնը։ Պատրիարը Սրրադանը իրեն jumnely oppositioned but p jujully pp չնորհակայութերնը և տուաւ իր պատգամը blophus pinents Sammpulpe Plant:

Այս տութիւ , Ն. Աժենապատուութիւնը Սուրբ Ցարութեան Տահարի Ա. Կարդի չջանչանով զարդարեց աղդային իր ծառայու-Թիւններով և բարերարութիւններով ծանօթ Տիտր Երջանիկ Գրսահիջեանի կուրծջը:

Օդոստոս 11, Երևջչաբթի, Ն. Ամենապատուութիւնը այցելեց Պրադիլիոյ Կարտինալ Արջեպիսկոպոսին, որ իր յառաջացած
տարիջին բերումով և անհանդստութեան
պատճառաւ ջաչուած կ՝ապրի իր բնակաբանին մէջ։ Ն. Գ. Կարտինալը ցաւ յայտնեց որ չէր կրցած անձամբ դիմաւորել Եբուսաղէմի Հայոց Պատրիաբջը օդակայանին մէջ, և ստիպուած կ՛ըլլար բարի դալուստի եղբայրական իր ողջոյնը տալ իր

Օգոստոս 12, Ձորեթչաբթի, Ն. Ամենապատուութիւն Պատրիարը Սրբազանը իր չջախումրով օդի ճամրով վերադարձաւ Պուէնոս Այրէս:

#### CUTANGELANDANG.

Օգոստոս 12, ՉորեթչաթԹի, դիչերը, Կեղրոնական Վարչութեան Ատենապետ Տիար Արժէն Պերկամայի ժեծ ընդունելու-Թիւն մր սարբած էր Պուէնոս Այրէսի իր յրեղ ապարանքին մէջ, ի պատիւ Պատրիարջ Սրբադան Հօր։ Ընդունելու Թեան հրաշիրւած էին ոչ միայն Հայ անձնաւորու Թիւններ, այլ նաեւ պետական և կրծնական բարձրաստիճան հիւրեր։ Ներկայ էին կրօնական Գործերու Վսեմ. Նախարար Տրթ. Խուկ Նոկերոլ Արժենկոլ և Փոխանորդը՝ Տրթ. Ռոպերին Պրավո։

Բարեկամական և մահրմիկ խօսակցութիւններու ընթացրին, Պատրիարը Սրրադանը յայտնեց իր տպաւորութիւնները Արժանքինի մասին ընդհանրապես, և Արժանթինահայութեան, առնչութեամբ մասնաւորաբար։ Ի պատասիան, Կրօնից Վսեմ. Նաիսարարը դնահատական բարձր արտայարտութիւններով դրուսահց Հայ համայնըը
իրբեւ աշխատասեր, տոկուն և աննահանջ
նկարայրի տեր հաւաջականութիւն, և չեչտեց Հայութեան վայելած անվերապահ
մատահութիւնը ամեն մակարդակի վրայ։

# ՄԻՈՒԹԵԱՆ ՃԱՇԿԵՐՈՑԹԸ -

Օդոստոս 13, Հինդշարթի, Պատրիարջ Սրրադանը իր շջախումրով այցելեց Այնթաղցիներու Հայրենակցական Միութեան Հնջը, ուր ներկայ էին Միութեան Վարշութեան անդամներուն շուրջ նաեւ բազմաթիւ Այնթաղցիներ։ Պատրիարջ Սրբադանը 
ծանօթացաւ չէնջին և Հոն կատարուող ընկերային-մշակութային գործունեութեան, 
ու իր դնահատանջի խօսջերը արձանագրելէ 
ետջ Ցուշամատեանին մէջ, Հրաժեշտ առաւ 
Այնթապի Հայրենակցական Միութենեն։

Նոյն օրը, երեկոյեան, Պատրիարգ Սբբբաղանը իր շգախումբով Հիւրը եղաւ Աբժանքինի Այնքաղցիներու Հայրենակցական
Միուքեան Վարչուքեան, որ շջեղ ճաշկեբոյք մր սարջած էր Հայ կեղբոնի սրահին
մէջ։ Ճաշկերոյքի ընքացջին խօսջ առին
Գերչ. Կաքողիկոսական Պատուիրակն ու
Այնքապցիներու Հայրենակցական ՄիուԹեան Վարչուքեան Պարոն Ատենապետը։
Ճաշկերոյքը փակեց Ն ԱժենապատուուԹիւնը իր ջաջալերանքի ու չնորհակալու-



Սուրբ Ցարութեան Տաճարի Առաջին կարգի շքանշանի տրւչութիւն Տիար Երջանիկ Գըսանիքեանի։

Թեան խոսջերով: Այս առթիւ Միութեան կողմէ Պատրիարջ Սրրադանին նուիրուեցաւ մարմարեայ տախտակ մր, որուն վրայ ոսկիէ ջանդակի մր մէջ կ՝երեւի Այնթապի Ս. Աստուածածին եկեղեցին, փորագրուած ձոնով մր:

#### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԵՐՈՒ.

Օդոստոս 14, Ուրրախ, Պատրիարջ Սրրթագանը այցելեց Պուէնոս Այրէսի երեջ Հայ Թերթերու՝ «Արժենիա»ի, «Շարժում»ի և «Սեւան»ի խմրագրատուները, և ծանօխադաւ անոնց դործի պայմաններուն:

Երեկոյեան, Ն. Ամենապատուութիւնը

Ն. Ամենապատուութիւնը իրեն սեզանակից ունեցաւ խումը մր ազգայիններ։

#### LULTHUUNDE UNKER QUSUPUS.

Օդոստոս 16, Կիրակի, Ս. Կոյս Աստուածածնի Վերափոխման Տօնին առթիւ Հանդիսաւոր Ս. Պատարադ մատուցուհցաւ Պուկնոս Այրէսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր
Եկեղեցիին մէջ։ Պատարադիչն էր Պատրիարջ Սրրադանը, որ ջարողեց որպէս ընտրան ունենալով Նարեկ Աղօթամատեանէն
փերցուած Հետեւհալ նախադասութիւնը.
«ԱՀա կաթիլ մի կաթին ջումդ կուսութեան
յանձն իմ անձրեւհալ»:

bothajtan, b. Withmounneneffelop



Ն. Ամենապատուութիւնը կը խօսի Մայրերու Օրուան հանդիսութեան:

Նախաղահեց «Հայ Կեղբոն»ի սրահին մէջ կազմակերպուած Քսան Կախաղաններու 49-րդ․ Յուչատօնի հանդիսուԹեան։

## 2PhPUUhPANPhNE on discounts append des

Օգոստոս 15, Շարաթ, Պատրիարջ Սըրրադանը ընթերիջի Հիւրը եղաւ փաստարան Պրն Անդրանիկ Աջապահետնի։ Այս առթիւ նախաղահեց «Հայ Կեդրոն»ի սրահին մէջ սարջուած Մայրերու Օրուան հանդիսու-Թեան:

ZUB OSTAL PEUT UPALPEUT

#### PLBUULTUL.

Օդոստոս 17, Երկուչարթի, Պուկնոս Այբեսի Հայ Օդնութեան Միութեան Վարչութիւնը «Սիթի Հօթել»ի մեջ սարջեց Թեյասեղան մը՝ պատուհլու Համար Պատրիարջ Սրբադանը, ինչպէս նաեւ նշելու Կաթողիկոսական Պատուիրակ Գերչ․ Տ․ Բարգէն Արջեպս․ Ապատեանի Կուսակըօն ՔաՀանայութեան 25-ամեակն ու Արջութեան բարձրացումը:

Ուչագրուօրէն զեղեցիկ կարկանդակի մր վրայ կը տեսնուէին հետեւեալ ջեր-Թրւածները, մին ձձնուած Ն. ԱմենապատւուԹեան, իսկ միւսը՝ Գերչ. ԿաԹողիկոսական Պատուիրակին.—

Գութ ու արիւնն մեր սրտերի
Իրրեւ շաղախ կառուցումի,
Կ'ընծայենք յորդ՝ որ յաւերժի
Փառք ու պարծանքն Հայոց Վանքի,
Ընդ հովանեաւ օծեալ Աջի
Տէր Եղիշէ Պատրիարքի,
Որու մաղթենք կեանք կուռ, յուռթի:

Վաստակէ վերջ ժիր, աննկուն,

Երբ զերդ մշակ՝ գոհ, պարտասուն,

Կ'ըմբոշխնէիք բերքը զեղուն,

Արժանացաք՝ Ձերդ Յորելեար՝

Պսակին դափնեայ մշտադալար
Ու Արքութեան հոգեպարար
Մաղթենք ցնծուն՝ Ձեզ կեանք երկար։

Կոկիկ յայտադրի մր դործադրութենկն և ուղերձներկ ետք Պատրիարը Սրբազանը կատարեց փակման խօսքը՝ դրուատելկ ետք Հ. Օ. Միութիւնը։ Ն. Ամենապատուու- Թիւնը տուաւ օրինակը համրաւաւոր չու- թակահար Բականիննիր, որ մենահամաներգի մր միջոցին կրցած էր դերադանց արուեստով մր նուադել մկկ լարի վրայ. նոյն ձեւով, եզրակացուց Պատրիարը Սրբազանը, Հ. Օ. Միութիւնն ալ մկկ լարի վրայ նուադելով՝ կրնայ արտասահմանի Հայերու որտերը իրարու կապել։

## Ա88ԵԼՈՒԹԻՒՆ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՒՈՑ.

Օգոստոս 19, ՉորևթչարԹի առաւօտեան, Պատրիարջ Սրրազանը իր չջախումբով այցելեց Պուէնոս Այրէսի Ֆլորէսի Ս. Խաչ Եկեղեցին, ուր Հաւաջուած էր Հաւատացհայներու խուռն բազմուԹիւն մը, բարի դալուստ մաղքնելու Համար Ն. Ամենապատւուքնեան: Խօսքը ուղղելով ներկաներուն, Պատրիարք Սրբադանը խրախուսեց դանոնք ու քնկադրեց որ աշելի բարդաշան դարձնեն Հանրաժանօք Տիարպէքիրեաններու բարեբարուքնեամբ կառուցուած եկեղեցին ու դպրոցը:

ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՑ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՑՆՔԻՆ

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, ընդառաջելով Վեր. Խաչատուրեանի Հրաւէըին, Պատրիարը Սրբադանը, ընկերակցու-Թեամբ Գերչ. Տ. Բարդէն Արջեպս. Ապատեանի, Հոդչ. Տ. Ցակոր և Շահէ Վարդապետներու, այցելեց Հայ Աւետարանական Ս. Երրորդութիւն Ժողովարանը, ուր հաւաջուած էին համայնքին դրեթէ բոլոր անդանները։

Պատրիարգ Սրբագանը և իրեն ընկերացող Եկեղեցականները բազմեցան բեմին վրրայ և մասնակցեցան յատուկ պաչտամունքի մը, որու ընթացքին Վերապատուհլին կարդաց Հին Կաակարանեն էջ մր, արmuumbby saglenely woold of he saglenge աղօթ ըներու երգեցողու թենկն եար աուաւ justly mannand of , nep apriming Lugarտանեայց եկեղեցող պատմական դերբ և անոր պայասնեաներուն նուիրուածութիւնը Lug Inquiarpale Sammine Holis Ungar անդրադառնալով Նուիրապետական Ա. թոոbefore to wholey hymbular flown, weligney. «bpt U. byshudling step quelou t, wyor beneumytop' be uppumbahibbend, Lughuկան աւանդութեամբ և դարերու դոյու-Whoodp' step thentegens upport to:

Ադրային որիով և Հայկականութեամբ օծուն իր խոսքերը վերջացուց՝ չնորհաւորելով Կաթողիկոսական Պատուիրակ Սրբադանը իր քահանայական ձևոնադրութեան բատնհինդաժեակին և Արթութեան պատիւր ընդունելուն առթիւ:

Վերջին խօսքը արտասանեց Աժենապատիւ Պատրիարք Սրրազանը, յայտնելու Հաժար իր չնորհակալունիւնը և դոհունակութիւնը, ու չեչտելու Թէ ժեր հոգեւոր կեանքի կեդրոնն է Ցիսուս Քրիստոսի կենարար այն ներկայութիւնը, որուն զգացումով Համակւած Հոգիներն են իրական ջրիստոնեայ և մեծ։ Պատրիարջ Սրբազանը օրՀնեց ներկաները և պաՀպանիչով փակեց պաշտամունջը։

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Նոյն դիչեր, Արժան թինանայ Ընկերակgneffleup by john Swie sty chepwohnty bրուսադէմի Ամենապատիւ Պատրիարբը: Ընկերակցութեան ազնիւ Նախագահը և Վարյութեան անդամները ողջունեցին Պատրիարբ Սրրազանին ժամանումը, իր շրախումրին stim, Sint dnimpfie le առաջնորդեցին զաըսրե վատիանքը շերմամանմաւագ ուաչև։ Հիւրերու և Ընկերակցութեան անդամներու փոխաղարձ ծանօթացումներէն ետբ, խօսբ առաւ Բրկերակցութեան Ատենապետը, յայտնելու համար իր և իր ընկերներուն ուրախութիւնը չնորհարեր այցելութեան առթիւ, և ամփոփ պատկերի մր մէջ դծելու՝ Արժանքինանայ Ընկերակցութեան դործունկութեան հանգրուանները, իրագործումներն ու ծրագիրները մանաւանդ ։ Գրն. Աinthinighting stymby Pt Aph. Shapub Uhrրէջեանի գուողութիւններուն և անդուլ հիդերուն չնորհիւ հացիւ քանի մր տարի առաջ կետնքի կոչուած Ընկերակցութեան հիմնական նպատակն էր րլլալ Տուն մը՝ ուր Հայ երիտասարդութիւնը արուեստի, գրականունեան, մարմնամարզանքի և գրօսանքի աժէն չնորհները զարդացնելու դետին մր դաներ, Հայկական մ Թնոլորտի ջերմու Թեան 159:

Նորին Ամենապատուութիւնը, պատասխանհլով բարի դալուստի խօսջերուն, յայտնեց իր դոհունակութիւնն ու խոր տպաւորութիւնը՝ ի տես նախ չէնջի փառաւորուժեան և ապա այդ չէնջը Հայկական Տունի մը վերածելու աղնիւ մտադրութիւններուն:

Ընդունելութենկն հաջ Ն. Ամենապատւութիւնը այցելից Պրն. Տիդրան Միւրկջհանի բնակարանը և օրհնեց անոր օճախն ու
ընտանիջը, իր բարձր դնահատանջը արտայայտելով այս մեծ ազգայինի հայօղուտ
դործունկութեան մասին:

#### UBBELAKPAKE WPAUGUE LUPAUPUEK.

Օղոստոս 20, Հինդչաբքի, կ. ա. ժամը 10.30-ին, Պատրիարը Սրրադանը իր չջախումրով այցելեց Երիմեան Վարժարան, ուր ընդունուեցաւ դպրոցի Պատ. Հոդարարձուքնան, ուսուցչական կազմին և աչակերտուքնան կողմէ։ Ցատկապես այս 
առքիւ պատրաստուած արտասանուքնեններու և երդերու յայտադիր մը դործադրրւեցաւ մանկապարտէղի և նախակրքարանի 
աչակերտուքնան կողմէ, ուչադրաւ առոդանուքնեամը և չունչով։

Դպրոցի ազնուափայլ Տնօրէնուհի Տկն. Ձապել Փափազհան կարդաց դեղեցիկ ուղերձ մր, դոր կու տանջ ստորեւ.

Ամենապատիւ Պատրիարք Հայր, Գերաշնորհ Սրբազան Հայր, Հոգեշնորհ Հայրեր

Այսօր ինձ քաղցր պարտականութիւն տրուած է վարժարանիս Ուսուցչական կազմին և աշակերտութեան կողմէ բարի գալուստ մաղթել Ձեզի այս յարկին տակ՝ որ 
Խրիմեան Հայրիկի պաշտամունքի արժանի 
անունը կը կրէ:

Մեր ազգային պատմութեան մէջ, որուն մասնաւոր զարկ կու տանք այստեղ, յանախ կը հանդիպինք եկեղեցական կարկառուն դէմքերու, որոնք իրենց անժխտելի նպաստը բերած են մեր ցեղի գոյատեւման պայքարին։ Մենք յատկապէս սէր ու գուրգուրանք ունինք Երուսաղէմի հանդէպ, որ մեր երբեմնի հոգեւոր ու աշխարհիկ փառքի սակաւաթիւ կոթողներէն մին կր հանդիսանայ։

Բայց և այնպէս Ս․ Ցակորայ Միարանութիւնը չի բաւականանար **Եկեղեցակ**ան գանձերու կամ թանգարանի մը պահապանի դերով․ իբրեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ արժանաւոր զինուորներ, երբ Սուրբ Վայրերու մեր դարաւոր իրաւունքները հարկ կ՛ըլլայ պաշտպանել օտարներու քով՝ բիր ի ձեռքին կը կռուին անոր զինուորեալ անդամները, երբ անզօր դառնայ խաչը։ Գիտենք նաեւ որ տարիներով գաղթականներու ստուար խումբեր կը պատսպարէ Ս․ Ցակոբեանց Վանքը իր երդիքին տակ․ իսկ կրթական մարզի մէջ՝ ունի Ս. Թարգմանչաց Նախակրթարանն ու Երկրորդական Վարժարանը, տպարան մը, և Ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը, ուրկէ կ՝ելլէ Սփիւռքահայութեան հոգեւորականներուն մեծ մասը։

Հիւլէական այս դարուն, շատեր կը կարծեն թէ եկեղեցին այլեւս ընելիք չունի ժողովուրդներու յեղաշրջման մէջ։ Տարրեր է
սակայն մեր ազգին պարագան։ Սփիւռքի
մատաղ սերունդը՝ մեր յոյսն ու ապագան,
որ իր բնական քուրայէն, հայրենի հողէն,
ջուրէն, արեւէն, հայկականէն հեռու՝ հասակ կը նետէ զանազան ազգերու և միջավայրերու ազդեցութեանց տակ ու կը սնանի
օտար մշակոյթներով, իր ազգային դիմագիծը պահելու համար ի՞նչ ունի եթէ ոչ
Հայկեան լեզուն ու Լուսաւորչի հաւատքը։

Ամենապատիւ Պատրիարք Հայր, մենք սրտանց կր մադթենք Ձեց արեւշատութիւն ու Ձեր գլխաւորած առաքելութեան՝ կատարհայ յաջողութիւն, որպեսգի շեն ու պայծառ մնայ Երուսադէմը։ Երբ մեր գաւառներու ժողովուրդը տեղահանուեցաւ իր պապենական հողերէն, անտէր մնացին մեր վանքերն ու եկեղեցիները, լռեցին կոչնակները: Ահա թէ ինչո՞ւ կր ցանանք կորուստէ փրկել մեր ազգի բեկորները, որոնց ներշընչելով սէր դէպի ազգը, յարգանք՝ դէպի ազգային մայր եկեղեցին ու մանաւանդ հաւատք՝ մեր ցեղի կարելիութեանց վրայ, վստահ ենք որ պիտի հնչեցնենք դարձեալ լռած զանգակները, համայն աշխարհի աւետելով խաչեալ Հայուն հրաշափառ յարութիւնը:

Աչակերտներու և Տնօրէնուհիի արտայայտութիւններէն զգացուած, Ն. Ամենապատուութիւնը սրտառուչ շեչտով մր խրակուսեց ուսուցիչներն ու աչակերտները որ կեն պահել կենսունակ և ներչնչիչ՝ իր անունը կրող Վարժարանէն ներս։ Հայրիկի հունը կրող Վարժարանէն ներս։ Հայրիկի նունը կրող Վարժարանէն ներս։ Հայրիկի աստերով Սրրագան հիւրը օրհնեց «սերմը և սերմանողը», մաղթելով որ աւելի ահի և ամրողջանայ Խրիմեան Վարժարանը։

Տեսչարանին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն մը, որուն ընթացջին Վարժա-

րանին կողմէ Պատրիարք Սրրազանին նրւիրուհցաւ Արժանթինեան մեծ բանաստեղծ Խոսէ Հերնանտէսի դեղակազմ հատորը, Անդլերէն Թարդմանութեամբ Մարթին Ֆիերոյի:

Կեսօրին, Պատրիարը Սրբազանը ճաչի հիւրը հզաւ Իսրայելեան ընտանիջին, և այս առԹիւ հանդիպեցաւ ԱրժանԹինահայ աղդայիններու պատկառելի խումրի մը:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Նոյն օրը, յետ միջօրէին, Պատրիարջ Սրրագանը իր չջախումբով այցելեց ՄխիԹարեան Վարժարան, ուր ընդունուեցաւ Հայր Խաչատուր Վրթանէսեանի, վարժարանի ուսուցչական կազմին և բարեկամներու կողմէ։ Այստեղ եւս, Հայկական երգերու և արտասանութիւններու գողարիկ 
յայտաղրով մը՝ աչակերտութիւնը ցուցարերեց իր չնորհները և ոդին։

Հայր Վրթանեսհան կարդաց ուղերձ մը, արտայայտելու Համար իր չնորՀակալութիւնը՝ Մաիթարեան Տան մէջ տեսնելու Հայաստանեայց Եկեղեցւոյ րարձրաստիճան հիւրը, որով ոգեւորուած կր զգան աչակերտները և խրախուսուած՝ բոլոր ուսուցիչները։

Պատրիարը Սրբազանը փոխադարձելով Վարդապետին խօսբերը, յայտնեց իր դդացուտծ դուսակութիւնը և օրենեց Մխիթարհան Հայրերու դործը:

Ապա, Ն. Ամենապատուութիւնը չրջեցաւ Վարժարանին բոլոր մասերը, ծանօթացաւ ծրագիրներուն և դժուարութիւններուն և Հրաժեչտ առաւ, լաւագոյն տպաւորութիւնհերով:

Նոյն դիշեր, Պատրիարը Սրբազանը ընթրիջի հրաւիրուեցաւ Կեդրոնական Վարչութեան անդամ և Ժրաջան ազդային Գրև. Ժիրայր Էջչեանի ընակարանը:

## ԿՐԿԻՆ ՄՈՆԹԷՎԻՏԷՈՑԻ ՄԷՋ.

Օգոստոս 21 , Ուրրաթ , Պատրիարջ Սրրրազանը իր չջախումրով օդի Տամրով մեկնեցաւ Մոնթէվիտէօ՝ նախագանելու տեղւոյն Հ. Բ. Ը. Միութեան Մասնանիւդի Հիննադրման 25-ամեակի Հանդիսութեան։ Ն. Ամենապատուութիւնը օդակայանին մէջ ընդունուեցաւ Կեդրոնական Վարչութեան և Հ. Բ. Ը. Միութեան անդաններու կողմէ։

Երևկոյհան, փառաշուք տօնակատարուԹեան ընԹացքին խօսք առին Հ. Բ. Ը. ՄիուԹեան ՄոնԹԷվիտէոյի ՎարչուԹեան Ատենապետ Պրն. Բարիլուր Գույում հան, Տկն.
Բերլա Պատիկեան, Պուէնոս Այրէսի, Գորտոպայի և Հիւսիսային Ամերիկայի Հ. Բ.
Ը. ՄիուԹեան ներկայացուցիչները։ Պատթիարք Սրբազանը իր խօսքին մէջ յատկապէս չեչտեց Բաթեզործականի նման ազգը
իր հեռաւոր և մօտաւոր բեկորներուն մէջ
ընդդրկող մեր ՄիուԹիւններու բարիքը,
մասնաւորաբար մշակուԹային և կրժական
մեր կեանքին մէջ, կոչ ուղղելով ներկանեըուն որ ամէն նկատումէ վեր դասեն մեր
կարիջները։

Յայտադրի վերջաւորութեան, յատուկ բանչաններ բաշխուեցան Հ. Բ. Ը. Միութեան վեթերաններուն և Բարեգործականին իրենց նիւթական ու բարոյական նպասար բերած վաստակաւոր ազգայիններուն:

Սոյն հանդիսունեան փակումը ընելով, Գերչ. Տ. Բարդեն Արթեպիսկոպոս չեչտեց ԵԼ եկեղեցին ու Բարեդործականը իրարու դործակիցներ են, թանի որ դործագրողներն են Բրիստոսի թարողած սիրսյ և բարեդոր-ծունեան սկզբուն ընհրուն: Ծնորհաւորելով Մասնահիւղի անդանները, Գերչ. Սրբադանը յաջողունիւն մաղքեց անոնց բոլոր ձեռնորիներուն ու նպատակներուն:

## USSELARPPRE GAPSAGUZUSARPEUL.

Օդոստոս 22, Շարաթ, Մոնթէվիտէոյեն վերադառնայէ անժիկապես ետք, Պատրիարը Սրրադանը իր շջախումրով և օդի համրով մեկնեցաւ Գորտոպա, տեղւոյն Հայ դաղու-Թին իր հայրական այցելութիւնն ու օրհնութիւնը տայու նպատակով:

Գորտոպայի օդակայանին մէջ, Հայ Թէ օտար խուռն բազմունեան մր ներկայու-Թեան, Քաղաջապետին կողմէ Ն. Ամենապատուութեան մատուցուհցաւ Գորտոպա բաղաջի ոսկեայ բանալին։ Պատրիարջ Սբբբաղանը ինջնաշարժներու երկար շջերքով մր առաջնորդուելով Հայկական Փողոց, մուտք դործեց Ս. Գէորգ Մատուռէն ներս, ուր, արարողութիւններէն ետք, ներկայ Հաւատացեալներուն տուաւ իր պատգամը։

Նոյն երեկոյեան, Պադրձեան Սրահին մէջ կազմակերպուած բարի դալուստի Հաւաթոյնեն հար, Ն Ամենապատաւունիւնը այցելունիւն մր տուաւ Ալնա Կրասիայի փորրանիւ Հայ դաղունին և Գորտոպա վեբաղարձաւ ուշ դիչերին:

Յաջորդ օր, Օգոստոս 23, Կիրակի, Պատրիարբ Սրրականը ներկայ հղաւ Ս. Գեորդ Մատրան մէջ մատուցուած Ս. Պատարադին և խոսեցաւ ներչնչուած բարող մր։ Ս. Պատարադի աւարտին, Սրրադան այցելուն առաջնորդուեցաւ Արմենիա Մչակությային Տունը, ուր «Հոդւոց» մր արտատանեց Արամ Երկանեանի չիրիմին վրայ։

Նոյն օրուան յետ միջօրէին, Պատրիարջ Սրրադանը նախադահեց Պադրճեան Սրահին մէջ կաղմակերպուած Մայրերու Օրուան հանդիսութեան և խօսը առնելով՝ չելտեց օրուան խորհուրդը ու մաղթեց որ Գորաոպահայութիւնը չտառապի տիպար Հայ մայրերու պակասէն։

մայրերու պակասէն։
Նոյն դիչեր սարջուեցաւ Պատուոյ Ճաչկերոյի մր, որուն ներկայ եղան նաեւ օտար յարանուանութիւններու `ներկայացուցիչներ ու պետական անձնաւորութիւններ։

Ցաջորդ օր, Օդոստոս 24, Երկուչարթի, Ն. Աժենապատուու թիւնը պաշտօնական այցելու թիւն տուաւ Քաղաքապետին և Կառավարչին, արժանանալով չերժ ընդունելութեան:

երեկոյեան ժամը 8.30-ին, Պատրիարջ Սրրադանը Հրաժեչտ առաւ Գորտոպահայութենկն և վերադարձաւ Պուկնոս Այրկս։

# ZPPOUDPONEOPEG.

Օգոստոս 25, Երևջչաբ Մի, Պատրիարջ Սրբադանը գիչերը հիւրասիրուեցաւ Դանիկլեաններու մօր բնակարանին մկջ, ուր այս առ Միւ հրաւիրուած կր պատկառելի խումը մր Պուկնոս Այրկսի երեւելի ազգայիններու:

## ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ

#### 1.U.P & U.PU.LP'6 .

Օդոստոս 26, Ձորև բչարթի, կ. ա. ժամը 11-ին, Պատրիարը Սրբաղանը այցելեց Արսլանեան Ադդային Վարժարանը, աւելի մօույն ծանօթանալու համար դպրոցի ներջին կեանջին։ Ն. Ամենապատուութիւնը պարուեցաւ դասարանները, ունկնդիր եղաւ աչակերաներու կողմէ կատարուած արտասանութիւններու և երդերու, հարցուններ 
ուղղեց անոնց, և չատ դոհ տպաւորութեամը հեռացաւ Հայեցի դաստիարակութեան դեղեցիկ այդ օձակւյն:

#### 200.4.68h 30.6460086.

Նոյն օրը կէսօրին, Ն. ԱմենապատուուԹիւնը հրաժելտի ճալ ունեցաւ կեղբոնական Վարչութեան անդամներուն հետ, «Ալվէտր Փալաս» պանդոկի լջեղ սրահին մէն և
այս առթիւ յայտնեց իր ղղացուած լնորհակալութիւնը Գաղութային Վարչութեան ու
անոր միջոցաւ Արժանթինահայ դաղութին՝
ա՛յն աննկարադրելիօրէն լջեղ ընդունելութիւններու, հիւրասիրութիւններու և ճալկերոյթներու լարջին համար, որոնջ Պատ-

րիարջական այցելու թիւնը վերածեցին մեծ տոնակատարու թեան մր ։

Նոյն դիչեր, Պրն Մանուկ Շիրինեան իր
տունը ընթիրի հրաւիրած էր Ն Ամենապատուութիւնն ու խումբ մր ազգայիններ,
վերջին խորհրդակցութիւն մր ունենալու
համար Սուրբ Ցարութեան Տահարի Հանդանակութեան առնչութեամբ։ Ներկաներէն
ոմանը, որոնը արդէն իսկ բերած էին իրենց
սիրայօժար մասնակցութիւնը սկսուող հանդանակութեան, բարձրացուցին իրենց խոստացած դումարները, մինչ ուրիչներ իրենց
խոստումները կատարեցին այս առթիւ:

Ցատուկ խանդավառութեամբ մր յառաջ եկաւ Դրն. Փանոս Էօրնէջեան և Թելադրեց որ ներկաները ապահովցնեն Պատրիարջ Սրբադանը Թէ ԱրժանԹինահայ դաղութե ալիտի կատարէր իր պարտականուԹիւնը համադղային այս հանդանակուԹեան առ-Թիւ։ Ջերմ մ Ծնոլորտի մր մէջ ներկաները դոյացուցին պատկառելի դումար մը, որ կը ներկայացնէր ԱրժանԹինահայուԹենէն ա-կընկայուծ դումարին մեծ մասը։

Երբ Պատրիարջ Սրբագանը Հրաժեչտ առաւ Պուէնոս Այրէսէն, նուիրատուութքիւններու ցանկը կը ներկայացնէր Հետեւհալ պատկերը.—

Գերը. Տ. Բարգեն Արքեպս. Ապատեան Տիար Մանուկ Շիրինեան Տիար Սարգիս Տիարպէքիրեան Տիար Տիգրան Միւրէքեան Պագրճեան Ընկերութիւն Մերկերեան Եղբայրներ Տիար Նուպար Քէքլիքեան Սարաֆեան Եղբայրներ Տիար Փանոս Էօրնէքեան Տիար Կիւրճեան Տիար կարապետ Էքշեան Ճէրէնեան Եղբայրներ Պարսամեան Եղբայրներ Տիար Արտաշէս Սարգիսեան Տիար Արամ Իսրայէլեան Տիար Ժիրայր Էքշեան Արսլանեան Ազգ․ Վարժարան Հ. Ա. Ե. Ե. Կազմակերպութիւն

50,000 obuo 1,500,000 obuo 1,500,000 Ohuo 1,000,000 Φbuo 500,000 Φbuo 500,000 Φbuo 500.000 obuo 500,000 Φbuo 500,000 Φbuo 300,000 Φbuo 300,000 Φbuo 300,000 Φbuo 200,000 Φbuo 150,000 фьио 150,000 фвио 100,000 Φhuo 75,200 obuo 50,000 фьио

Հ. Օ. Միութիւն	50,000 Φbuo
Աջապահեան Ընտանիք	50,000 Phuo
Հոգեւոր Քոյրեր	40,000 Φbuo
Տիար Լեւոն Թէրգեան	30,000 Фьио
Տիար Վահրամ Պօյանեան	25,000 Фвио
Արժ. Տ. Նորայր Քինյ. Տ. Խորէնեան	10,000 Фьио
Տիար Յովհաննէս Թէրգեան	5,000 Phuo
Տիար Մանուկ Շահինեան	2,000 Φbuo
Սարաֆեան և Պասմաճեան մանուկներ	1,000 Φhuo
Տիար Միհրան Մէրմէրհան	1,000 Фьио
b. b.	500 Фрио

#### TEGUNEU.

Օգոստոս 27, Հինդչարթի, երեկոյեան ժամը 7-ին, Պատրիարջ Սրրազանը «Բանակրա» օգանաւով մեկնեցաւ Պուէնոս Այրէսէն դէպի Նիւ Եորջ։


Բարձրաստիչան Հիւրին ողջերը մաղթելու Համար օդակայան փութացած էին Կեդրոնական Վարչութեան Պատ. անդաժները, դաղութին երեւելի աղդայինները և Հոծ խումբ մր դանազան միութիւններու և կաղմակերպութիւններու ներկայացուցիչներու:

Օդակայանկն, Պատրիարջ Սրրադանը յղեց Հետեւեալ Հեռադիրը Արժանթինի Վոեմ Նախադահին.— Նորին Վսեմութիւն Տքթ · Արթուրօ Ումպերթօ Իլիա, Նախագահ Արժանթինի Կառավարութեան ·

Դէպի Սուրբ Երկիր վերադարձի համար այս օրհնեալ հողը թողելու առթիւ, կը ներկայացնենք Ձերդ Գերազանցութեան մեր անկեղծ երախտագիտութեան հաւաստիքը, Արժանթինի Կառավարութեան, Եկեղեցականութեան և Ժողովուրդին ուշադրութեան համար մեր Արժանթին գտնուած միջոցին:

Կ՝աղօթենք որ Աստուած օրհնէ և պահէ Արժանթինի ժողովուրդը Ձեր առաջնորդու– թեան ներքեւ բազում և երկար տարիներ։

> ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ - ՏԷՐՏԷՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ





Ն․ Ս․ Օ․ Տ․ Տ․ Վազգէն Ա․ Վեհափառ Կաթողիկոսի Գահակալութեան Տարեդարձին, Ն․ Ամենապատուութիւնը Կը ներկայացնէ իր ջերմ շնորհաւորութիւնները Սուրբ Օծութեան։